

78




Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

Ժե Տարի - ՅՈՒԼԻՍ 1939 15^{me} Année - Juillet 1939

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Քրիստոսի Մարմինը (Յ. Ն. Ղ.)	52
ՀՈԳ. ԿԵԱՆՔ — Հոգի ոյժը (Թրգմ. Ն. Մ.)	97
Ներկայ Հրեաները եւ անոնց հոգեւոր միտքը (Մ. Յ. Պողոսեան)	99
ԵՐԶԱՆԻԿ ՅՈՅՍԸ — Առաւօտեան պայծառ աստղը (Վեր. Պ. Ս. Ակիւլեան)	100
Յիսուսի գալուստը (Վեր. Ժ. Կ. Պ.)	101
Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — Թագաւորութեան Խորհուրդը (Scofieldէն)	102
ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ — Կեանքի տոմարակալութիւնը — Արդէն դատաւարտուած — Անվրէպ դարմանը — Ամէն ալ եղբայրներ — Աստուած մեռած չէ (Հաւաքից՝ Վեր. Ժ. Կ. Պ.)	103
ՃԷՅՄՍ ՀԸՏՍԸՆ ԹԷՅԼԸՐ — Նոր ճամբաներ — Ճամբորդութիւնն ու Չինաստան հասնիլը (Թրգմ. Ն. Մ.)	104
Յիսուսի սէրը (Աննա Յ. Տէր-Յովհաննէսեան)	105
ՊԱՏԱՆԵԱՅ — «Լէճի ջահակիրները» (Թարգմանութիւն)	108
Խաչեալ Գառը (Սիսակ Գալայեան)	109
ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ — Ստուգել եղբ. Պաղգալեանի տեղեկագիրը (Սամուէլ Պ.)	111
ԵՐԳ — Տէր, ամէն բանս Դուն ես (Թրգմ. Յ. Ն. Ղ.)	112



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանական եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիս, նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխառն վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը անհատներու համար, այլ ամենուն, բոլորի Յշմարտութիւնը «Բան» Ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը, հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսաթերթը կը հրատարակուի Մարտէլի մէջ 16 էջերով (կողքէն զատ անոր խմբագրական ժարմինն անդասներն են

Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, Վեր. Ա. Օ. ՓԱՓԱԶԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ
 ԲՐՕՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ, Պատ. Մ. ՎԷՔԻԼԵԱՆ

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք գիտեն վերադառնալ ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով: Յօդուածաւարքեր մինչեւ որ ամբողջութիւնով խմբագրութեան ձեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընթերցելի եւ մեկանով գրուած թուղթին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ բլլալու են: Խմբագրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու եւ օգտակար դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք կուգան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են առաջութեան հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ աւալու համար:

XXXXXXXXXXXX

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ Բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի Յունուարին եւ կը վերջանայ Դեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

Ֆրանսա 25 ֆրանք, Սուրիա 20, ֆրանք
 Արտասահման Տուար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
 ՀԵՏԵԻԵԱԼ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայէն travelers check, թղթադրամ
 եւ ամերիկեան նամակագրօշմ կրնայ ղրկուիլ:
 Ուրիշ երկիրներէ \$ 1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:


Յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ
 իսկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
 Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ
 հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
 7, Rue Papère
 MARSEILLE (France)

Մանտայով դրամական առաքումի առթիւ հաճեցէք մանտային վրայ գրել
 H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille

Արմենցի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելն
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Է 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մ'նացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է'
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԵ. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1939

ԹԻԻ 7

ԻՆՉ ԵՆ ՀԱԻԱՏԱՅԵԱԼՆԵՐԸ



ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄԻՆԸ

Արդ, դուք Քրիստոսի մարմինն էք, մասնաւորապէս Անոր անդամները:



Ա. Կոր. ԺԲ. 27

ՄԱՐՄԻՆ ԲԱՐՈՐ «Քանչեւ խորհրդանշին է եկեղեցիին, որ մարդկային մարմինն նման բաղադրեալ գործարանաւորութիւն մը ունի, «Քանչեւ կերպով կազմակերպուած, որուն մէջ գտնուած իւրաքանչիւր գործիք ինքնայատուկ գործունէութեամբ մը մասը կը կազմէ ամբողջին: Հոս ալ, ինչպէս ուրիշ առիթներով նկատած ենք, կը տեսնենք անհատը (հաւատացեալը) և հաւաքականութիւնը (եկեղեցին) որուն իւրաքանչիւր անդամը նոյնասեռ (վերէն ծնած) է:

Առաքեալը ուրիշ պատկերով մըն ալ կը լուսաբանէ խնդիրը, նոյն գրքին Ժ. 17ի մէջ հետեւեալ բառերով. «Մենք շատերս մէկ հաց, մէկ մարմին ենք»: Այս հացը կը ներկայացնէ ամբողջութիւնը հաւաքականութեան, որուն մէջ մէն մի ցորենի հատ ալիւրի ձեւին տակ, առանց իր յատկութիւնը կորսնցուցած ըլլալու զանգուածին մէջ իր տեղն ունի: Եթէ նոյնիսկ չենք ալ կրնար վերաճանաչել անհատ ցորենը, միւսներուն մէջ ընկղմած ըլլալուն, սակայն նա միւսներուն հետ նոյն նպատակին կը ծառայէ, կազմել զանգուածը և հացը:

Երբ նկատի առնենք սոյն երկու խորհրդանշները, կը գտնենք անոնց մէջ Քրիստոսի մարմինն երկու յատկանիշները, գործնք յիշել արժանի է:

ա.) Անհատը ընկղմած է մարմինն մէջ: Հաւատացեալը ալ իրենը չփնտռեր, հանգիստ, երեւոյթ, պատիւ, դիւրութիւն, զօնաբերութիւն, հալածանք, հարստութիւն, անհատական խոր-

հուրդ կամ դադափարաբանութիւն տեղի կուտան, ընդհանուր բարձրագոյն շահին, թագաւորութեան շահերուն, ուր աւելի մեծ շահերով վսեմ նպատակ մը կ'իրականանայ:

բ.) Հակառակ որ մարմինը մէկ է, սակայն մարմինն անդամները ամէն մէկը իրենց ուրոյն գործառնութիւններն ունին: Անոնք ընկղմած չեն, կրաւորական չեն, այլ ունին գործունէութիւն մը, անհատականութիւն մը, անհատական դադափար, կամք, որոնք սակայն սրբուած են բարձրագոյն դադափարին ենթակայ ընելու ինքզինքնին, բարձրագոյն շահերուն ծառայելու համար: Այս է նշանակութիւնը վերնադիրն — մարմինը, մասնաւորապէս Անոր անդամները:

Այս երկու կէտերը կը բացատրեն, աւելի ճիշդը կը ներկայացնեն եկեղեցիին մէկութիւնը: Եկեղեցին, որու մասին յաճախ խօսելու պատեհութիւն ունեցած ենք Բանբերի մէջ, մէկ է, մէկ զանգուած: Անոր մէջ յարաւորութիւն, սեռ, ազգ, լեզու կը լուծուին և կը մնան միայն հաւատացեալներ, որոնք կը կազմեն մարմինը միակ գլխուն, Քրիստոսի:

Այս մէկութեան պայմանը արդէն իր մէջն է: Քրիստոս: Քրիստոս միակ գլուխը միակ մարմնոյն: Այսինքն, ուր Քրիստոս միակ գլուխ ըլլալէ դադրի, Քրիստոսի մարմինը ըլլալէ կը դադրի և այդ մարմինը Քրիստոսի մարմին կոչել ըլլորովին անիրաւութիւն ու անարդարութիւն պիտի ըլլար: Քրիստոսի մարմինը իրեն

կը վերաբերի և Քրիստոս Իր մարմինը միայն կը լրացնէ:

Այս կէտերուն վրայ լուսաբանուելէ յետոյ, կ'արժէ նաեւ ուշադրութեան առնել այն սերտ ու նուրբ յարաբերութիւնը, որ գոյութիւն ունի Քրիստոսի և Իր եկեղեցիին միջեւ այսինքն գլխուն ու իր մարմնոյն:

Մարմին ըսելով մարդիկ կը հասկնան գաղափարի մը, նպատակի մը շուրջ հաւաքուող ընկերութեան մը ամբողջական զանդուածը: Այս բառն ալ դեռ փոխաբերաբար առնուած է մարդկային մարմինին յարաբերութեամբ: Ուրեմն մարմին բառին հիմը մարդկային մարմինը կը կազմէ:

Մարդկային մարմինը իր ամբողջ գործառնութիւնովը առեղծուածային հմայք մը ունի: Անոնք որ մարդակազմութիւն կարգացած են, չեն կրնար չհիշանալ այն Մտքին վրայ, որ ստեղծած է զայն իր բծախնդիր մանրամասնութիւններով: Ատիկա ընդարձակ նիւթ մըն է ուսումնասիրութեան և հոգեւոր առումով, որու մէջ մտնել չպիտի թուլատրէին Բանբերի էջերուն նեղ սիւնակները, սակայն կ'արժէ անձնապէս զբաղիլ ասով, աւելի լաւ ճանչնալու Քրիստոսի մարմինին հոգեւոր ամբողջական էութիւնը:

Գիտնականները կ'ըսեն թէ մարմինը կազմուած է ապրող բջիջներէ, խիստ մանր տարրերէ, որոնք իրենք իրենց մէջ տիեզերքի չափ կանոնաւոր և իրենց գործունէութեամբը կատարեալ ամբողջական տիեզերքներ են:

Մարմինը ունի իր ոսկորները, միսը, մորթը, իր անդամներն ու զգայարանքները իւրաքանչիւրը աստուածային իմաստութեամբ ամէն մէկը յարմարապէս գետեղուած, որպէսզի այն իր կատարելութեամբն ու գեղեցկութեամբը յարմարի գլխուն:

Գլխուն ու մարմինին միջեւ գտնուած յարաբերութիւնը մարդակազմութիւն կարգացողներու անմիջապէս կը յիշեցնէ իրենց գրքին մէջ գտնուած մարդկային մարմինին այն սեւ ուրուագիծը, որուն մէջ անոնք տեսած են հարիւրաւոր շիղերու տրցակը, որ գլուխէն ուղեղի անմիջական կապակցութեամբ վար կ'իջնեն մարմինին բոլոր մասերուն հասնելու հաղարաւոր ճիւղաւորումներով: Այս շիղերը ուղեղին ու մարմինին միջեւ գտնուած յարաբերութեան ազդակներն են: Անոնք կը հասնին ամենանուրբ ճշգրտութեամբ մարդկային մարմնոյն մինչեւ վերջին ծայրերը ու կը տեղաւորուին հոն, ուր մարդ արտաքին աշխարհի հետ անմիջական յարաբերութեան

մէջ է: Փափկօրէն շոյեցէք ձեր մատերուն ծայրերը, ու հոն պիտի զգաք շիղերու սքանչելի պաշտօնին մեծ արժէքը: Այս շիղերու տրցակն է ահա, որ իր հաղարաւոր նրբին ճիւղաւորումովը մարմինը սերտ յարաբերութեան մէջ կը դնէ գլխուն հետ: Ուր այդ շղային թելերը հիւանդ են, հոն գլխուն ու մարմինին միջեւ գտնուած յարաբերութիւնը կը կաղայ և ուր անոնցմէ մին կտրուած է, անոր վերաբերեալ դաշտերը գլխուն հետ յարաբերութենէ դադրած են: Կը խորհիմ թէ կը հասկնաք որ նոյնն է պարագան մեր հոգեւոր կեանքին մէջ, Քրիստոսի և հաւատացեալին միջեւ գտնուած յարաբերութեան վերաբերումով: Յիսուսի նըպատակն է բնականօրէն՝ հաւատացեալին կեանքի բոլոր գործառնութիւնները Իր ձեռքին մէջ ունենալ, աւելի ճիշդ և բնական է ըսել թէ — արդէն ունի: Ասոր հակառակը հիւանդութեանց ախտանշանն է:

Հաւատացեալը Քրիստոսի կապող այդ թելերու տրցակը հաւատքն է — Աստուծոյ անդին մէկ պարգեւը: Հաւատացեալին ապրած կեանքը կը կոչուի հաւատքի կեանք: Առ Արրահամը, քննէ անոր հաւատոյ կեանքը և տե՛ս այդ վսեմ յարաբերութեան գեղեցկութիւնը:

Հիմա քննենք թէ մարմինին մէջ տեղի ունեցող գործառնութիւնները ի՞նչպէս կը հաղորդուին գլխուն և ի՞նչ հետեւանքներ տեղի կ'ունենայ:

Արտաքին աշխարհէ եկող առաջին հպումը մեր մարմինին այդ կէտը իր շղային ամենանուրբ ցանցին միջոցաւ ելեքտրական արագութեամբ ուղեղին հետ յարաբերութեան կը դնէ, ուղեղը նոյնքան ելեքտրական արագութեամբ կ'ըմբռնէ պարագան և նոյն ճամբայով և արագութեամբ իր հրահանգները կը ղրկէ մարմինին այդ կէտին և կամ ուրիշ կէտերու հարկ եղած գործը, պաշտպանութիւնը, յարձակումը եւայլն կատարելու: Ուրեմն երբ ասեղ մը կը մտնէ մեր մատը, չէ թէ մատը կ'զգայ ցաւը, հապացնցումը շիղերու միջոցաւ կը հաղորդուի ուղեղին, որ իր կարգին կը դասաւորէ եղածը, անոր ցաւ ըլլալը և որ աստիճան ցաւ ըլլալը և անոր համաձայն հասկացողութիւն, դարման ու պաշտպանութեան միջոցներ կը ղրկէ մատին: Այս ճամբով կը հասկնանք նաեւ մեր անօթութիւնը, ծարաւը, յոգնութիւնը եւայլն, եւայլն:

Արդ, ասով կը գիտնանք թէ հաւատացեալին կեանքի բոլոր գործառնութիւնները կը դասաւորուին ու կը կատարուին Քրիստոսի ձեռքին մէջ: Մտքերնիս բերենք Պօղոսի կեանքը ու

անոր խօսքը. «Ո՛չ թէ ես կ'ապրիմ, հապա Գրիստոս կ'ապրի իմ մէջը»: Այդ բնական դիրքին մէջ ըլլալուն համար էք որ բնական գրչով մը կը գրէ. «Ի՛նչ որ ինծի շահ էր, զանկա Գրիստոսի համար ֆնաս սեպեցի... և աղտեղութիւն կը սեպեմ»: Այս է բնական հաւատքի կեանքը, հաւատոյ ջինջ յարաբերութիւնը հաւատացեալին և Գրիստոսի միջեւ: Տէրը օգնէ բոլոր հաւատացեալներուս, այս բոլորանուէր ու բնական յարաբերութեան մէջ դալու Հո. ԺԲ. 1ի համաձայն: Հոգ անբնական ու բռնազբօսիկ բան չկայ, այլ ամէն ինչ արեւի նման պայծառ է: Հաւատացեալը Գրիստոսի մէջ է և Գրիստոս հաւատացեալին մէջ: Գրիստոսի առաքինութիւնները հաւատացեալին մէջ կ'երեւին այդ յարաբերութեան բոլորովին բնական բերումովը:

Մեր նիւթէն դուրս կ'իյնայ մարմինին անդամներուն իրարու մէջ ունեցած յարաբերութիւնը, զոր կրնանք քննել նոյն գլխուն 12—26 համարներուն մէջ, որոնք եզրակացութիւն մեր նիւթը կը յիշէ առաքեալը:

Արդ, դուք Գրիստոսի մարմինն էք, ու մասնաւորապէս Անոր անդամները:

Յ. Ն. Ղ.



ՀԶՈՐ ՈՅԺԸ

Ամէն բանի կարող եմ Անով՝ որ զիս զօրացուց.

ՓԻԼ. Դ. 13

Այո, սակայն ո՞վ է այս խօսքը արտասանողը: Մարդու մը նկարագրէն կը չափուի անոր բերնին վկայութիւնը:

Երբ մէկը հարուստ ծնած է ու միշտ ծաղիկներով շրջապատուած և հանգիստ կեանք մը ապրելով հանդերձ, իր տարած յաղթանակներուն վրայ կը պարծենայ, անոր վկայութիւնը անարժէք է: Ի՞նչպիսի կեանք մը կայ Պօղոսի վկայութեան հետեւ: Ի՞նչ վիշապներու դէմ պատերազմած է: Ի՞նչ տեսակ սատանայի մը առջեւն ելած է. քանի՞ անգամ կոռելով զինուած զունդերուն մէջէն անցնելու հարկադրուած է: Կեանքը անոր համար զբօսա՞նք մը եղած է թէ խաչակրութիւն մը: Պօղոս Առաքեալ չի խրաչիւր այս կարգի հարցաքննութենէ մը: Մեծ պատմութիւն մը

ունի իր ետեւ: Ամենէն սաստիկ կրակներուն մէջէն անցած է: Ահեղի վտանգներ դիմադրաւ ու զանոնք ոչնչացուցած է: Եւ ահա իր մրրկալի օրերուն վախճանին մեզի կտակ կը թողու այս յաղթական վկայութիւնը՝ «Ամէն բանի կարող եմ Անով՝ որ զիս զօրացուց»:

Ի՞նչ ըրած է: Անիկա մէկգի ըրած է հին նախապաշարուններ, որ իր մորթին պէս իրեն փակած էին: Պօղոս փարիսեցի ու փարիսեցիներու ամենէն խստապահանջ դասակարգին մէկ անդամն եղած էր. նեղմիտ ու նախանձաւոր, սակայն Տէր Յիսուս Գրիստոսի զօրութեամբ իր նախապաշարուններէն մերկանալով, փրկեալներու յատուկ համակրանքով ու արգասատանքով զգեցած էր: Ուրիշ ի՞նչ ըրած էր: Նախապաշարեալ հին հաւատակիցներու թշնամութեանց ու բռնութեանց դէմ պայքարած էր: Ոչ մէկ հակառակութիւն հաւասար է արն հակառակութեան զոր մարդ կ'ընդունի այն խումբէն, որմէ զատուած է: Երբ քաղաքական պաշտօնեայ մը կը փոխէ իր քաղաքականութիւնը, դառն հակառակութեան կը հանդիպի: Երբ կրօնական ընկերակցութեան մը մէկ անդամը եկեղեցական տարբեր խումբի մը կը միանայ, իր հին կրօնակիցներուն սաստիկ թշնամութեան առարկան կը դառնայ: Թշնամութիւն մը, որմէ սաստկագոյնը չի գտնուիր: Ասիկա ճշմարիտ էր նաև Պօղոս Առաքեալի համար: Անիկա իր դիրքը փոխելով, շրջապատուած էր իր հին բարեկամներուն չաւառմիտ հալածանքներով: Անոնք անոր պատգամին առջեւ պապանձելով կը ջանային պատգամաւորը սպաննել: Սակայն Պօղոս անոնցմէ ո՛չ վախցած ոչ ալ պարտուած էր: Ընդհակառակը, կրկին ու կրկին բռնաւորներուն ու հալածողներուն վերադառնալով փրկարար շնորհաց Աւետարանը հռչակած էր. «Ամէն բանի կարող եմ»:

Ուրիշ ի՞նչ եղաւ: Իր նոր հաւատքը տարածելու խաչակրութեանն սկսաւ: Յիսուսի աշակերտն ըլլալով, Անոր Առաքեալն եղաւ: Հետաւոր երկիրներ գնաց իր Աւետարանին լոյսը տեսակ տեսակ ու բոլորովին տարբեր պայմաններու տակ ապրող մարդոց տանելու: Ի՛նչ մեծ զօրութիւն ու իմաստութիւն հարկ էր այսպիսի զանազան պայմաններու և պէտքերու կոհացում տալու: Իւրաքանչիւր շրջանակ որ կը մտնէր, կարծես իր յատուկ պայմաններն կը ներկայացնէր: Հոս կը հանդիպէր քանի մը կիներու Փիլիպպէի մէջ, գետի մը եզերքը, հոն Արիստապոսի մէջ կարգ մը փիլիսոփաներու ու դարձեալ կայսերական Հռովմի փառքին ու շոայութեան մէջ

բնակող անհատներու: Սակայն Պօղոս ինքզինքը չէր կորսնցներ: Ամէն դէպքերու և երեւոյթներու դէմ ելլելու պատրաստութիւնն ունէր: «Ամէն բանի կարող եմ»: Ի՞նչպէս կարող էր: «Անով որ զիս զօրացուց»: Իր կարողութիւնը ուրիշէ մը կ'ստանար: Զօրութեան շտեմարան մը կար որմէ խոնարհաբար կ'առնէր իր ոյժը: Այն շտեմարանը անձնաւորութիւն մըն էր, որ զինքը կը զօրացնէր: Երկու անձնաւորութիւններ, որոնցմէ մէկէն զօրութիւն կ'անցնէր միւսին մէջ: Պօղոս մեռած պատմական հերոսէ մը չէր առներ իր ոյժը, այլ կենդանի Քրիստոսէ մը, որ իրեն հետ կը հաղորդակցէր ու զինք կ'ոգեւորէր: Անիկա իր կենդանութեան հեղուկը, հոգեւոր կորովը ու իր ազդեցիկ ոյժը կ'առնէր Աստուծոյ կենդանի Քրիստոսին հետ կենդանի հաղորդակցութիւն մշակելով: Քրիստոսնեայ անունը կրող շատ մը անհատներու համար ցաւալի կէտը այն է որ անոնք զուրկ են զօրութեան շտեմարանէն: Ուրեմն երբ արտաքոյ կարգի դժուար խնդրոյ մը առջեւ կը գտնուին, չեն կրնար անոր դիմադրել ու չարաչար կը պարտուին: Անոնք իրենց ոյժը կ'առնեն իսէպնիւրէ ու փրկիսոփայութիւններէ: Որչափ որ ամպերէն եկած ելեկտրականութեան կրնայ վստահուիլ, նոյնչափ կրնանք վստահիլ փրկիսոփայութիւններու ու իսէպնիւրէ: Մեզի պէտք եղածը կենդանի Ակ եղող կենդանի անձնաւորութիւն մըն է, որ իր հեղեղները կը թափէ մեր խղճալի հոգիներուն մէջ, Միայն Անիկա «հացով լեցուած» է: Անոր քով է պահեստի ոյժը՝ որ մեզ կրնայ զօրացնել նոր նոր դժուարութեանց դիմադրելու: Եթէ եռանդուն ու յաղթական կեանք մը կ'ուզենք ապրիլ, հզօր ոյժի մը կը կարօտինք, զոր միւսին յարուցեալ ու փառաւորեալ Տէրոջը մէջ կրնանք գտնել: «Ամէն բանի կարող եմ Անով». կարող նոյն իսկ երեւութապէս անկարելիին: Փրկութեան բանալի պաշտօնեաներէն մէկին հետ կը խօսէի, որ իր մութ ու անդարձ օրերուն մասին պատմելով կ'ըսէր. «Սոսկալի բարկութիւն մը ունէի, որ մէկ վայրկեանի մէջ զիս սատանայի կը վերածէր»: «Կարծեմ թէ այլեւս յաղթած ես այդ բարկութեանդ», ըսի: «Ոչ, ոչ», պատասխանեց ան, «Քրիստոս բարկութեանս յաղթեց»: Անկարելին կատարուած էր: Այս է յաղթական կեանքի գաղտնիքը:

Թարգմ. Ն. Մ.

ՆԵՐԿԱՅ ՀՐԵԱՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՀՈԳԵԻՈՐ ՄԻՏՔԸ

Անցեալ թիւին ներկայացուցինք Խել Սլօւթովսքի Ռաբբին կենսագրութիւնն ու դարձը: Այս առթիւ կ'արժէ որ Բանբերի ընթերցողները լսեն, ի՞նչ որ պատասխանեց նա, իրեն եղած հարցումներուն:

Հարցում.— Հրեաներուն մէջ ի՞նչ է վերաբերումը հանդէպ կրօնքի:

Պատասխան.— Հրեական ժողովուրդը երկուքի բաժնուած է հիմա: Խստակրօն հրեաներ և անկրօն և անհաւատ և անաստուած հրեաներ: Ժողովուրդին կրօնքէ և Աստուծմէ հեռու ըլլալուն մէկ պատճառը թալմուտ գիրքն է: Անոր մէջ գրուած օրէնքները այնքան շատ են որ ժողովուրդը անկարելի կը տեսնէ զանոնք պահել: Զոր օրինակ, Շաբաթ օրը պահելու համար հազարաւոր օրէնքներ կան: Թալմուտի համեմատ, եթէ մարդ մը զրպանին մէջ թաշկինակ մը ունենալով չորս եարտա քալէ Շաբաթ օրը, այդ մարդը Շաբաթը պղծած կ'ըլլայ: Եթէ իր հագուստին վրայ ասեղ մը գտնուի և անով քալէ, Շաբաթը պղծած կ'ըլլայ, քանզի բեռ մը տարաւ Շաբաթ օրը: Այս տեսակ օրէնքները անհամար են և ժողովուրդը ձանձրացեր է անոնցմէ և կը խորհի թէ կարելի չէ զանոնք կատարել:

Հարցում.— Հրեաները Հին Կտակարանը չեն կարդար և ատիկա չեն սերտեր:

Պատասխան.— Ժողովարանին մէջ կը կարդան, սակայն շատ քիչեր կը հասկնան, քանզի Եբրայերէն լեզուաւ կը կարդացուին և շատեր չեն գիտեր Եբրայերէն լեզուն: Եսայի Մարգարէին գիրքը կը կարդան ժողովարանին մէջ: Անոնք բոլոր գիրքը կը կարդան զլուխ առ զլուխ: Սակայն երբ 52րդ գլխուն կուզան, 12րդ համարին մէջ կը կենան: 52րդ գլխուն միւս մասը և 53րդ գլուխը ամբողջովին զանց կ'ընեն. 54րդ գլուխին սկիզբէն կը շարունակեն կարդալ: Ատիկէ զատ Հրեաներուն համար թալմուտ աւելի կարեւոր է, քան Հին Կտակարանը: Աւելի կը կարդան թալմուտը:

Հարցում.— Հրեաները կը խորհի՞ն թէ թալմուտ ալ ներշնչեալ գիրք մըն է:


Պատասխան.— Անշուշտ, անոնց համար ոչ թէ թալմուտ միայն ներշնչեալ է, հապա թալմուտի վրայ գրուած բոլոր մեկնութիւնները, և

մեկնութիւններուն մեկնութիւններն ալ ներ-
շնչեալ են: Ես անձամբ թալմուտի մէկ մեկնու-
թիւնը գրեցի. սակայն փառք Տէրոջ որ անտիպ
մնաց: Ես ինքս կը հաւատայի թէ իմ գրած
մեկնութիւնս ալ ներշնչեալ էր:

Մեր եղբայրը մի քանի բաներ յիշեց թալ-
մուտէն, որոնք շատ ցաւալի են, և զորոնք գրա-
ւորապէս հաղորդել Բանքերի ընթերցողներուն,
նոյնիսկ անյարմար և վատասեռիչ է: Որչա՛փ
կուրացած է ընտրեալ ցեղը: Սակայն չմոռնանք
թէ Ան Աստուծոյ կողմէ ընտրուած է և խիստ
շատ նեղութեան յետոյ, պիտի լուսաւորուի,
անոր աչքերը պիտի բացուին Քրիստոսը ճանչ-
նալու եւ Ասոր աւետարանիչներն ըլլալու: Ասոր
համար աղօթենք:

Այս տողերը կարդացողներ չմոռնան աղօթե-
լու հել Սլօսթովսքի եղբօր համար, որպէսզի
աւելի Տէրոջը նուիրուած, քաջ գործաւոր մը
ըլլայ, իր կուրացած խեղճ ազգին:

Մ. Յ. ՊՕԶՕԳԼԵԱՆ



Առաւօտեան աստղը տեսե՞ր ես, և եթէ տեսեր
ես, ի՞նչ տպաւորութիւն ունեցած ես անկէ: Յի-
շած ես քու Փրկիչդ որ ինքզինք կ'անուանէ
«Առաւօտեան պայծառ Աստղ»։ Յայտ. 22 : 16:
Եւ ի՞նչ է այս անուան իր վրան առնելուն նպա-
տակը:

Մեր Տէրը Սուրբ Դիրքին մէջ երկու հարիւ-
րէն աւելի տարբեր անուններ ունի, որոնցմէ
իւրաքանչիւրը իր մասնաւոր գործին կամ պաշ-
տօնին հետ կապակցութիւն ունի: Երբ Ան կ'ըսէ,
«Ես եմ բարի Հովիւր», և իրեններն ալ «ոչխար-
ներ» կը կոչէ, ցոյց տալ կ'ուզէ թէ Ինքն է
իրեններուն պաշտպանը. Յով. 10 : 11, Եբր. 13 : 20:
Երբ Ան կ'ըսէ, «Ես եմ ճշմարիտ Որթը», և իրեն-
ներն ալ կը կոչէ «ճիւղեր», ցոյց տալ կ'ուզէ թէ
Իրմէ է և Իրմով է կեանքը իրեններուն մէջ:

Իսկ հոս կ'ըսէ, «Ես Դաւիթի արմատը ու ցեղն
եմ, առաւօտեան պայծառ Աստղը»: Ուշադրու-
թիւն ընելու կէտը այս է որ, Տէր Յիսուսի այս
խօսքերէն անմիջապէս վերջը, «Հոգին (Սուրբ
Հոգին) ու Հարսը (Եկեղեցին) կ'ըսեն եկուր».
ուրեմն որոշապէս կը հասկնանք թէ Տէր Յիսուսի
«Առաւօտեան Աստղ» անունը Իր երկրորդ գա-
լստեան հետ էական և իմաստալից կապակցու-
թիւն մը ունի:

Հազար ինը հարիւր տարիներէ ի վեր այս
եկեղեցիին անդամները այս երջանիկ յոյսով
սպասած են Ասոր յայտնուելուն: Սուրբ Հոգին,
որ Պէնտէկոստէի օրը եկաւ, Քրիստոսի համար
եկեղեցի մը պատրաստելու, զործը ի կատար
հանելու համար ամէն նախատինք և դժուարու-
թիւն յանձն առած է: Շատ անգամ կը մերժուի,
շատ անգամ իր աղերսները անտես կ'ըլլան:
Հոգի մը համոզելու և անոր մեղաւորութիւնը
իրեն ցոյց տալու և Փրկչին առաջնորդելու հա-
մար ի՞նչ անխոնջ ջանքեր կ'ընէ, և ինչպէ՞ս
անոնց նոր ծնունդ կուտայ: Անիկա եկեղեցիին
մէջ հաւատացեալներուն պարզեւներ և պաշտօն-
ներ կուտայ իր ուզածին պէս: Սակայն շատ
անգամ ալ հաւատացեալներուն կողմէն տրտմու-
թիւն կը քաշէ, և այս բոլոր աշխատութիւննե-
րուն մէջ իր փառքը երբէք չփնտռեր, հապա
բոլոր զօրութիւնով կը փառաւորէ զԱյն որ եկե-
ղեցիին ղրուխն է, այսինքն Յիսուս Քրիստոս:
Ահա այս օրհնեալ Սուրբ Հոգիին ալ բոլոր փա-
փաքը այն է որ Փեսան զայ և Իր Հարսին տի-
րանայ, ասոր համար Ան ալ եկեղեցիին հետ
կ'ըսէ, «Եկուր»:

Թէև մենք կ'սպասենք այն օրուան, որ մեր,
սիրելի Փեսան շուտ գայ և Իր խոստմունքին
համեմատ մեզ տանի Իր փառքին մէջ, սակայն
աւելի ևս Սուրբ Հոգին կը փափաքի որ շուտով
եկեղեցիին թիւը լիննայ, և որպէսզի Իր աշխարհ
զալուն նպատակին հասած ըլլալով տանի զայն
և ներկայացնէ Փեսային:

Առաւօտեան Աստղը կը ծագի զիշերուան
լուութեան և թանձր մթնոթեան մէջէն, և երբ
ան ծագի, զիտենք որ արշալոյսը մօտեցած է:
Նոյնպէս ալ Սուրբ Դիրքը մեզի լուր կուտայ
թէ Տէր Յիսուս, որ եկեղեցիին Առաւօտեան
պայծառ Աստղն է, աշխարհի այս թանձր մթն-
թեան մէջէն, երբ աշխարհ մեղքի քունին մէջ
կը քնանայ, մէկէն պիտի ծագի և Իր մագնիսա-
կան զօրութիւնով իր Հարսը եղող եկեղեցին Իր

քով պիտի առնէ: Այն ատեն ցնծութիւնով
երգենք՝

Ես պիտի վեր բարձրանամ,
Իր ներկայութեան,
Յաղթական խումբին հետ անդրանկաց,
Սուրբերուն և երիցանց,
Որքա՛ն է փառաւոր,
Մեծ ժողովն արդարոց հանդիսաւոր:

Աստուծոյ զաւակ, արդեօք ո՞րչափ ուրախ ես
այս «երջանիկ յոյսով»: Արդէն դուն և ես այս
աշխարհիս մէջ իբր պանդուխտ և օտարական-
ներ ուրիշ յոյս մը և ակնկալութիւն մը չունինք,

գիտնալով որ ուրիշ յոյսեր և ակնկալութիւններ
ունայն են և մեզ երջանիկ չեն կրնար ընել,
բայց մենք մնայուն և փայլուն ապագայ մը
ունինք, «Անեղձ ու անարատ եւ անթառամ ժա-
ռանգութիւն մը», որ մեզ կ'սպասէ: Ուրեմն
զլուխդ վեր վերցուր, քանի որ կը պատկանիս
այն տեղին և «սպասէ այն երջանիկ յոյսին, և
մեծ Աստուծոյ ու մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի
փառքին յայտնուելուն»:

Տէրովը ծառայութեան մէջ ձեր եղբայրը՝

(Վեր.) Պ. Ս. ԱԿԻԻԼԵԱՆ

Ֆիլատէլֆիա

ՅԻՍՈՒՍԻ ԳԱԼՈՒՍՏԸ

Ով Տէր Յիսուս ինչո՞ւ այսքան,
Գալուստը կ'ուշանայ,
Ահա Հարսը նայէ որքան
կարօտով քեզ կ'անձկայ:

Այն նըշաններն, ո՛հ, Գալստեան,
Միթէ չե՞ն լըրացած,
Եւ կամ Հօրը տան մէջ փեսան
Գեռ տեղ չէ՞ պատրաստած:

Ա՛հ գիշերը խիստ է երկար,
Հարսը կը մըրափէ,
Եւ Պատանան — օրերն են չար,
Հօտըդ կը չարչարէ:

••

Ո՛վ պըզտիկ հօտ, մի վըհատիր
քեզ երբեք չեմ մոռցած,

Բայց հոգիներ կան բիւր, ընտիր
Որ դեռ չեն փրկւելած:

Նաեւ Հարսն իմ, պէտք է որ Գուն,
Մէջքդ գօտեւորես,
Ճրագդ վառած, կենաս արթուն
Որ գիս դիմաւորես:

Յայնժամ կուգամ շուտ ամպերով
Որ Գուն յափշտակուիս,
Եւ օդին մէջ բիւր սուրբերով
Յաւէտ իմ հետս լինիս:

••

Օ՛ն, ուրեմն սիրուն եղբարք,
Լապտերներն մեր շտկենք,
Արթուն կենանք, փոխենք մեր վարք,
Փեսան դիմաւորենք:

Ժ. Կ. Պ.



Ս. ԳՐԱԿԱՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝
SCOFFIELDԷՆ
Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԹԱԳԱՌՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
(ՅԱՆԵՐԼԱԾԱԿԱՆ ՂԵՐԱԴՐԱՆԵՐ)

Այսպէս ուրեմն երկիրքի թագաւորութիւնը ունի իր ա. ներկայ շրջանը քրիստոնէական դաւանանքի միջնորդութիւն մէջ, որուն ակնարկելով Յիսուս ըսաւ, «Աստուծոյ թագաւորութիւնը իրաւունք երեւցած բաներով չգար... Վասն զի ահա Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսիդին է»։ Ղուկ. ԺԷ 20, 21: Տասը կոյսերու առակը Մատթ. ԻԵ 1—13 կը ներկայացնէ նաեւ այս ճշմարտութիւնը: Տասն ալ՝ իմաստուն թէ յիմար, իրարու նմանող լապտերներ ունին, բայց երկու բան կը բնորոշէ յիմար կոյսերուն իսկական վիճակն ու արժէքը, «անոնք իւր չափին» և «ես ձեզ չեմ ճանչնար»։ Իւրը Ս. Հոգիին նշանն է, և «եթէ մէկը Գրիտոսի հոգին չունի, անիկա Անորը չէ»։ Հոռով. Ը 9: Ու նաեւ Տէրը բնաւ հաւատացեալի մը, որքան ալ մարմնաւոր ըլլայ՝ ան, «ես քեզ չեմ ճանչնար» չըսեր:

Բ. Երկիրքի թագաւորութեան ապագայ շրջանը փառաւոր է: Այն ատեն «Տէրը տանը լեռը լեռներուն զլխուն վրայ պիտի հաստատուի, և բլուրներէն վեր պիտի բարձրանայ»։ (Միքիայ Դ 1—13), Ս. Գրոց մէջ լեռ մը երկրաւոր մեծ զօրութեան մը օրինակն է (Դան. Բ 35), և բլուրներ աւելի պզտիկ զօրութիւններու: Հոս Մարգարէն կը յայտարարէ, ա. թագաւորութեան վերջնական հաստատումը, Երուսաղէմը մայրաքաղաք ունենալով. Բ. Ապագայ թագաւորութեան տիեզերականութիւնը. Գ. Անոր յատկութիւնը — խաղաղութիւն. Դ. Անոր արտաքին երեւոյթը — առատութիւն:

Այն ատեն «Գալլը գառին հետ պիտի բնակի»։ Քանզի երկիր Տէրը զիտութիւնովը պիտի լեցուի» ու «Տէրը փառքին գիտութիւնովը», Եսայ. ԺԱ 9, Ամբ. Բ 14:

Այն ատեն ամենէն պզտիկը դիրքով (ոչ բարոյական արժէքով) աւելի մեծ պիտի ըլլայ, քան որ էր Յովհաննէս Մկրտիչ երբ երկրի վրայ Գրիտոսի դեսպանութիւնը կը կատարէր: Այո՛, երբ թագաւորութիւնը հաստատուի փառքով և

զօրութեան ու փառքի լեցունութիւնովը, Մեսիային թագաւորութեան մէջ ամենապզտիկն ալ շատ փառք պիտի ունենայ:

Այն ատեն, երբ Երուսաղէմ հաստատուի աշխարհի ժողովրդեան աւտուածաշտութեան կեդրոնական տեղն ըլլալու՝ հրեան պիտի դառնայ միսիոնարը և պիտի ղրկուի Աւետարանը տանելու նոյն իսկ այն ազգերուն, որոնք հիմա քրիստոնեայ կը կոչուին. Զաք. Ը 23:

Այլապէս պիտի տեսարանը Մատթ. ԺԷ 1-9, իբր մանրանկար կը պարունակէ ապագայ յայտնուելիք թագաւորութեան բոլոր անձերը և դիրքերը: Ա. Տէր Յիսուս հոն ոչ թէ իր խոնարհութեան դիրքին մէջ է, հապա փառքի մէջ. Հ. 2: Բ. Մովսէս փառաւորաւոր՝ ներկայացուցիչն է բոլոր այն փրկեալներուն, որոնք մահուանէ անցնելով կը մտնեն թագաւորութեան մէջ, Մատթ. ԺԳ 43, Ղուկ. Թ 30, 31: Գ. Եղիա փառաւորաւոր՝ ներկայացուցիչն է բոլոր այն փրկեալներուն, որոնք յափշտակուելով կը մտնեն թագաւորութեան մէջ. Ա. Կոր. ԺԵ 50—53, Ա. Թեա. Դ 14—17: Դ. Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս չփառաւորաւոր ներկայացուցիչներն են (առ աշտ) մարմնաւոր Իսրայէլի ապագայ թագաւորութեանը մէջ. Եզեկ. ԼԷ 21—27: Ե. Լեւան ստորաւոր գտնուող բազմութիւնը կը ներկայացնեն ազգերը, որոնք թագաւորութեան մէջ պիտի մտցուին, անոր Իսրայէլի վրայ հաստատուելէն յետոյ. Եսայ. ԺԱ 10—12, Եսայ. ԺԷ 31—37:

Երկիրքի թագաւորութիւնը Յովհաննէս Մկրտիչի կողմէն, նոյնինքն թագաւորին կողմէ և 12 աշակերտներուն կողմէն իբր «մօտ» քարոզուելէ և զօրաւոր գործերով փաստարկուելէ յետոյ Իսրայէլի կողմէ բարոյապէս մերժուեցաւ: Այն ատեն Յիսուս, մերժուած թագաւորը, նախատեսեց եւ վճռեց դատաստանն ու կործանումը այն քաղաքներուն, որոնք ընտրուած էին Իսրայէլի թագաւորն ընդունելու փորձի վայրերն ըլլալ. «Բորազին, Բեթսայիդա և Եսայի», Մատթ. ԺԱ 20—28, ԻԳ 37—39: Թէև Իսրայէլ պաշտօնապէս Պիղատոսին առջեւ մերժեց զԱյն. Մատթ. ԻԷ 31—37:

Այս օրէն սկսեալ Յիսուս ուրիշ պատգամ մը սկսաւ տալ. «Եկէք ինձի բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ, և ես ձեզ պիտի հանգչեցնեմ...»: Մերժուած թագաւորը հոս ալլելս երեսը կը դարձնէ մերժող ազգէն, և կ'ընծայէ ոչ թէ թագաւորութիւնը, հապա հանգիստ և ծառայութիւն ազգին մէջէն անոնց, որոնք այս բաներուն կարօտ ըլլալու գիտակցութիւնը ունին:



ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ

ԿԵՆԱՑ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ԿԵԱՆՔԻ ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Աշխարհային երիտասարդ մը խեղկատակութիւն ընել կ'ուզէր միեւնոյն գրասենեակին մէջ աշխատող քրիստոնեայի մը հետ: Քրիստոնեան անոր հարցուց «Ս. Դիրք մը ունեցե՞ր էք»: «Օ՛հ, այո» պատասխանեց նա հեզնական եղանակով մը, «Ես երբեմն զայն աչքէ կ'անցնեմ տեսելու համար թէ Մովսէս տոմարակալութեան վրայով ի՞նչ ըսելիք ունի»: «Իրապէս» պատասխանեց քրիստոնեան «Եւ երբէք խորհած էք անոր նայիլ, տեսնելու համար թէ Տէր Յիսուս ի՞նչ ըսելիք ունի շահու և փաստի նիւթին շուրջ»: «Ո՛ր, նա ի՞նչ ըսելիք ունի»: Նա կ'ըսէ «Ի՞նչ կը շահի մարդ մը՝ եթէ բոլոր աշխարհը վաստկի և իր անձը կորսնցնէ կամ փաստէ»: Ղուկ. Թ 25, պատասխանեց երիտասարդ վկան:

ԱՐԴԷՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ

Օր մը խեղճ ոճրագործ մը որ մահուան դատապարտուած էր, գրիչ, մեկան և թուղթ ուզեց՝ երբ իր ուզածը իրեն տրուեցաւ նա սկսաւ գրել: Բժիշկը անոր հարցուց «Ի՞նչ կ'ընես», «Իմ կտակս կը շինեմ»: «Քու կտակդ շինել, չե՞ս գիտեր որ այն օրէն երբ դատարանին մէջ քու վճիռը տրուեցաւ դուն մեռած մարդ մըն ես օրէնքին առջեւ: Քու կողմէդ եղած կտակ մը հիմա երկրի ու է է դատարանին առջեւ արժէք մը պիտի չունենայ: Օրէնքը չի կրնար ճանչնալ մարդու մը գործողութիւնները, որուն գոյութիւնը ըստ օրէնի վերջացած է, քանզի դուն լոկ գիպուածով տակաւին ողջ ես: Օրէնքին առջեւ քու կեանքդ վերջացած է այն վայրկեանին, որ դատաւորը վճիռդ տուաւ»:

Խեղճ մարդը որ ասկէ առաջ երբէք ասանկ կատարելապէս ճանչցած չէր իր կացութիւնը, երեսը ձեռքերուն մէջ առած սկսաւ հեծեծալ: Նա կենդանւոյն մեռած էր: Ա. Տիմ. Ե 6: Այսպէս ալ «Ո՛վ որ չի հաւատար, արդէն դատապարտուած է» այսինքն կենդանւոյն մեռած:

ԱՆՎՐԷՊ ԴԱՐՄԱՆԸ

Ամերիկացի եպիսկոպոս մը օրին մէկը քաղաքի մը փողոցներուն մէջ երբ քալելով կ'երթար, բժիշկի մը հանդիպեցաւ որ զինք իր կառքին մէջ հրաւիրեց: Բժիշկը անհաւատ մ'էր: Քիչ յետոյ խօսակցութիւնը կրօնքի շուրջ դարձաւ:

Անհաւատ բժիշկը ըսաւ «Ես կը զարմանամ որ ձեզի պէս հանճարեղ մէկը այդպիսի առասպելի մը կը հաւատայ»:

Եպիսկոպոսը անմիջապէս չպատասխանեց, բայց քիչ յետոյ ըսաւ «Տօգթօր, ենթադրենք թէ տարիներ առաջ մէկը ձեզի թաքախտի համար դեղագիր մը յանձնարարած և անոր մասին բացատրութիւններ տուած էր և դուք դեղը առած ու բացատրութեան համաձայն գործածած էք: Ենթադրենք թէ անկէ ի վեր այդ դեղագիրը ձեր հիւանդներուն գործածեր էք և երբ բացատրութեան համաձայն գործածուած է, իրեն յաջող արդիւնքները երեւան բերած է: Ի՞նչ պիտի ըսէիք այն մարդուն որ անոր չպիտի հաւատար ու ձեր դեղագիրը գործածել չպիտի փորձէր»:

«Նա յիմար պէտք էր ըլլար» պատասխանեց բժիշկը:

Եպիսկոպոսը շարունակեց, «Քսանըհինգ տարի առաջ ես Աստուծոյ շնորհքին զօրութիւնը փորձեցի, ան զիս տարբեր մարդ մը ըրաւ, այս տարիներու ընթացքին ուրիշներուն փրկութիւն քարոզած եմ և ուր որ Ան ընդունուած է, ան վրէպ իր գործը կատարած է: Տեսած եմ որ Ան հպարտը խոնարհ ըրած է, գինեմուր ծովափալ, հայհոյողը ուրբ և անպարկեշտը հաւատարիմ: Հարուստը և աղքատը, ուսեալը և անուսը, ծերը և երիտասարդը նմանապէս իրենց ախտերէն բուժուած են»:

«Զիս աղէկ մը բռնեցիք, եպիսկոպոս, ես յիմար մը եղայ» ըսաւ բժիշկը:

Պատմութեան վերջաւորութիւնը միայն այս է, անհաւատ Տօգթօրը յաջողակ կիրակնօրեայ դպրոցի մը վերակացուն եղաւ:

ԱՄԷՆՆ ԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Զինաստանէն վերջին տեղեկագիր մը կը հաստատէ թէ Ճաբոնցի զինուոր մը պաշտամունքի ատեն Զինացի քրիստոնեաներու մէկ եկեղեցին մտաւ: Անոր մուտքը կասկած և վախ

արթնցուց ժողովականներու մէջ, մինչեւ որ նա կայնեցաւ ու ըսաւ, «Ես արձանագրեալ զինուոր մը, սակայն քրիստոնեայ մըն եմ, կը փափաքեմ ձեզի հետ պաշտամունք մատուցանել: Այն ատեն զինքը հիւրասիրեցին: Ժողովը փակուելէն ետք ճաբոնցին հովիւին քով գնաց և անկէ խնդրեց որ իր անունը ճաբոնէն հետը բերած Ս. Դրքին մէջ արձանագրէ: Հովիւը չինարէն լեզուաւ գրեց «Քրիստոսի մէջ ոչ Հրեայ կայ և ոչ Յոյն»:



ԱՍՏՈՒԱԾ ՄԵՌԱԾ ՁԷ

Կը պատմուի թէ Փրէտէրիք Տուկէս, գերեվարութեան պերճախօս հակառակորդը. անգամ մը իր բանախօսութեան մէջ, երբ ամէն ինչ մոլթ կ'երեւէր իր ցեղին համար, ողբալով ըսաւ.

«Ճերմակ մարդը մեզի դէմ է, կառավարութիւնները մեզի դէմ են, ժամանակներու ոգին մեզի դէմ է: Գունաւոր ցեղին համար յոյս չեմ տեսներ: Տրտմութիւնով լեցուած եմ»:

Ճիշդ այն ատեն ունկընդիրներուն մէջ աղքատ, պառաւ, գունաւոր կին մը ելաւ ու ըսաւ, «Փրէտէրիք, Աստուած մեռած է»:

Հիմա, շատ մը երիտասարդ հաւատացեալներ կը վհատին, երբ կեանքի պայքարին փորձառու կ'ըլլան: Ուրիշներ կ'սկսին խորհիլ թէ Աստուած զիրենք մոռցած է, և քրիստոնէութեան դաւանանքը չապրուիր, սակայն անոնք պէտք է նկատեն թէ հոգի մը ծուղակէն ազատուելէն շատ չանցած Հակառակորդը քայլեր կ'առնէ զանիկա կրկին իր ծուղակին մէջ ձգելու: Նա իր բոլոր ոյժերը ի գործ կը դնէ իր կորսնցուցած որսը կրկին ձեռք բերելու: Ամենաբոռն յարձակումները ամենազօրաւոր բերդերուն է որ կը սղուին և աւելի բոռն պատերազմը որուն երիտասարդ հաւատացեալը կանչուած է, գիտնալու է թէ Աստուած զինք պիտի չլքէ իր նեղութեան ժամանակը:

Հաւաքեց՝ Ժ. Կ. Պ.

Ամէն բան Անոր ըսէ՝ այսօր

Ամէն բան Անոր հարցուր՝ այսօր

Հնազանդէ Անոր՝ այսօր

Ու երջանիկ կ'ըլլաս՝ այսօր:

ՃԷՅՄՕ

ՀԸՏՍԸՆ

ՆՈՐ ՃԱՄԲԱՆԵՐ

ԹԷՅԼԸՐ

Երկու օր վերջը՝ Յունիսի բուրումնալի օրերէն մէկին մէջ՝ Պարնսլիի բնակիչներէն միջնասակ տիկին մը նամակ մը ստացաւ: Անիկա մէկ նայուածքով ճանչցաւ գիրը: Ձեռքին աւելը անկիւն մը դնելով՝ դրան շէմին վրայ նստաւ լոկի, պատգամը կարդալու: Շաբաթ օրուան Մր. Պըրտի հետ ունեցած տեսակցութիւնը մանրամասնօրէն բացատրելէ վերջ՝ Հըտսըն կը գրէր՝ «Կը խորհիմ թէ, սիրելի մայր, լաւ պիտի ըլլայ Մր. Պըրտի թելադրութեան հետեւելով՝ ընկերութեան ներկայացնել խնդիրս: Սակայն նախ քու պատասխանիդ կ'սպասեմ ու քու աղօթքներուդ վրայ կը դնեմ իմ վստահութիւնս: Եթէ անմիջապէս ընդունուիմ, խորհուրդ կուտամ որ ճամբայ ելլելէ առաջ տուն դամ: Ինծի կուզայ թէ մեզի աւելի դիւրին պիտի ըլլայ կրկին զիրար չտեսնել, քան տեսնելէ վերջ յաւիտենապէս բաժնուիլ: Ո՛չ, ո՛չ յաւիտենապէս: Դիւրին է ամէն ինչ Քրիստոսի համար թողելու նկատմամբ խօսիլ, բայց երբ փորձի կ'ենթարկուինք, կը տեսնենք թէ միմիայն կատարելապէս Անոր մէջ հաստատուած ըլլալով կրնանք այս բանն ընել: Աստուած օրհնէ քեզ, իմ հարազատ, սիրելի ու անգին մայրիկս: Ձեմ կրնար աւելի դրել, սակայն կը յուսամ թէ կարելի եղածին չափ շուտ պիտի լսեմ քեզմէ: Ինծի համար շատ աղօթէ»:

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՉԻՆԱՍՑԱՆ

ՀԱՍՆԵԼԸ

1853 Սեպտեմբեր 19ին Տըմֆրիս կոչուած առաքաւտանաւը Անգլիոյ Լիվըրփուլ քաղաքէն ճամբայ ելաւ Չինաստանի Շանհայ քաղաքը երթալու: Ճամբայ ելլելէն ճիշդ առաջ՝ նաւուն յետակողմը գտնուած խցիկներէն մէկին մէջ հրաժեշտի ժողով մը տեղի ունեցաւ: Ճէյմս Հըտսըն թէյսը, անոր սիրեցեալ մայրը ու մէկ երկու բարեկամներ քանի մը պարզ ու սրտազին աղօթքներ մատուցին, յուզուած հոգիներու խորերէն բղնող աղօթքներ՝ որ այնքան դիւրաւ կը հասնին երկնային գահին: Կարդացին նաեւ

Սաղմոս մը ու քանի մը երգեր երգեցին: Յետոյ նաւը սկսաւ շարժիլ:

Մայր ու որդի աշնքան քաջութիւն ցոյց տուին՝ որքան որ կարելի էր ցոյց տալ նմանօրինակ պարագայի մը տակ: Սակայն այս վերջին հրաժեշտը իրենց երեւակայածէն աւելի դժուար եկաւ իրենց: «Միբելի մայր, մի լար, շատ չանցած դարձեալ պիտի տեսնենք զիրար: Մտածէ թէ ինչ փառաւոր նպատակի մը համար է որ քեզ կը թողում: Ոչ թէ հարստութեան կամ նշանաւոր դիրքի մը հասնելու համար կը հեռանամ քեզմէ, այլ խեղճ Զինաստանցիները Յիսուսի գիտութեան բերելու նպատակաւ»: Այս խօսքերով Հըտսըն զատուեցաւ իր մօրմէն: Երբ նաւուն մէջէն՝ ծովեզերքը կեցող իր մօրը կը նայէր, շուտով ձեռքը եղած Սուրբ Գիրքին մէջէն պարագայ թերթ մը փրցնելով և անոր վրայ «Բրիստոսի սէրը, որ գիտութեանէ զերազանց է, Ճ. Հ. Թ.» գրելով՝ զայն իր մօրը նետեց:

Մայր թէյլը իր բարեկամներուն զրած մէկ նամակին մէջ կ'ըսէր՝ «Քանի որ մեր թաշկիւնակները շարժելով ճամբորդներէն հրաժեշտ կ'առնէինք, Հըտսըն նախ ամենէն առջեւը կեցած իր զլխարկը կը շարժէր. յետոյ աւելի բարձր տեղ մը մագլցելով շարունակեց զլխարկը շարժել: Իր այս դիրքին մէջ անիկա աւելի յաղթական հերոսի մը կը նմանէր՝ քան թէ դեռ նոր պատերազմի դաշտը մտնող պատանիի մը: Տակաւ առ տակաւ չկրցի զայն այլեւս զանազանել ու քանի մը վայրկեան վերջը ճամբորդ ու նաւ աներեւոյթ եղան»:

Ճամբորդութեան առաջին 12 օրերը ահռելի օրեր էին: Սոսկալի փոթորիկ մը ելաւ ու ծովը մեծ ալեկոծութեան մէջ ըլլալով առագաստանաւը մէյ մը Իրլանտիոյ՝ մէյ մը Ուէյլդի եզերքին կը զարնուէր: Քանի, քանի անգամներ քիչ մնաց որ ժայռերու վրայ ջարդ ու փշուր ըլլար: Պաշտօնեաներն ըսին թէ այդպիսի կատաղի ծովու մը հանդիպած չէին տակաւին: Մէկ վայրկեանին նաւը օդին մէջ կ'ելլէր, յաջորդին ծովուն խորը կ'իջնէր, կարծես անոր յատակը խորտակելու կ'երթար:

«Եթէ Աստուած մեզի չ'օգնէ, որ եւ է յոյս չկայ», ըսաւ նաւապետը:

Հըտսըն թէյլըր յիշեց Աստուծոյ խօսքը որ կ'ըսէ՝ «նեղութեան օրը ինծի կ'անչէ, Ես քեզ պիտի ազատեմ, ու դուն զիս պիտի փառաւորես»: Երիտասարդ միսիոնարը շերմեռանդօրէն աղօթեց ու հակառակ կոհակներուն կատաղի

հարուածներուն՝ անոր հոգին ճշմարտապէս հանդարտ էր:

Քանի որ նաւապետը վերջնական փորձեր կ'ընէր իր նաւը խորտակումէ ազատելու, նախախնամութիւնը նպաստաւոր հով մը խրկեց ու 12 երկար և ահռելի օրերէ վերջ նաւը վերջապէս կրցաւ ցամաքի եզերքներէն հեռանալով բաց ծովը մտնել:

Հըտսըն թէյլըր հաճոյքն ունեցաւ նաւուն մէջ ուրիշ քրիստոնեայ երիտասարդի մը հանդիպելու և այս երկու Աստուծոյ զաւակները՝ նաւապետին թոյլտուութեամբ սկսան Աւետարանչական ժողովներ ընել նաւազներուն համար:

Դեկտեմբերի սկիզբը Ափրիկէի հարաւային ծայրը բոլորեցին ու 1854 Յունուար 5ին 120 մղոն հեռաւորութեամբ Աւստրալիոյ մօտեցան: Անկէ վերջ Հնդկաց Ովկիանոսի կղզիներուն մէջերէն վտանգաւոր ճամբորդութիւն մը ընելով Խաղաղական Ովկէանոսը մտան: Անկէ ալ Զինաց ծովը հասնելով՝ Զինաստանի Վուսընկ նաւահանգիստին մէջ խարխախ նետեցին 1854 Մարտ 1ին:

Այն օրերուն առագաստանաւերը հինգուկէս ամիսէն Լիվըրփուլէն Շանհայ կը հասնէին: Այսօր նոյն ճամբորդութիւնը հինգուկէս շաբաթ անգամ չտեւեր շոգենաւով:

Երիտասարդ միսիոնարին օրագիրքը լեցուն էր հետաքրքրական նօթագրութիւններով, սակայն անիկա իր օրագրութեանց մէջ աւելի տեղ տուած էր հոգեւոր փորձառութեանց: Զոր օրինակ, Դեկտեմբեր 31 թուականին տակ գրած էր՝ «Այս անցեալ տարուան ընթացքին Աստուծոյ ինծի ցուցուցած ողորմութիւններն ու Անոր բարութիւնները ինծի հանդէպ վերյիշելով՝ ապշած՝ սիրոյ ու փառաբանութեան մէջ կ'ընկղմիմ: Մինչեւ հոս Տէրը ինծի օգնեց: Տարուան վերջին վայրկեանները աղօթքով անցուցի ու տեսայ թէ Տէրը խիստ թանկագին է»:

Մինչ նաւը խարխախ նետած մէջին մէջ կ'սպասէր, որպէսզի բնիկներ գալով զայն Վուսընկէ Շանհայ առաջնորդէին Վանկիու գետին վրայէն, երիտասարդ Հըտսըն իր ամենէն թանձր հազուատներն հագած՝ նաւուն տախտակամածին վրայ վեր վար կը պտըտէր: Կազմ ու պատրաստ էր: Տեղն հասնելուն միայն կ'սպասէր որ անմիջապէս դուրս ելլէր: Այս վայրկեաններուն մասին կը զրէ՝ «Ինչ առանձնաշատակ զգացումներ կ'արթննան մարդուն մէջ, երբ կը մտածէ թէ անծանօթ երկիր մը և օտար ազգի

մը մէջ պիտի մտնէ: Երկիր մը՝ որ այլեւս իմ հայրենիքս ու գործատեղիս պիտի ըլլայ»: «Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ»: «Բնաւ քեզ պիտի չթողում, ու բնաւ քեզ երեսէ պիտի չձգեմ»: «Ի՛նչ քաղցր խոստումներ: Քանի որ Յիսուս իմ քովս է, վախճալու բան մը չունիմ»:

Մէյ մըն ալ արտասովոր առարկայ մը երեւցաւ: Նկարագեղ աղագաստ մը, գունաւոր նաւակ մը, 12—14 սեւաչեայ, դեղնամորթ ու կապոյտ զգեստներով Չինաստանցիներ, որոնք անծանօթ լեզու մը կը խօսէին: Առաջին Չինարէնը զոր Հըտսըն թէյլըր կը լսէր: Ինչ մեծ սիրով կը բարախէր իր սիրտը անոնց հանդէպ: Անոնց արտասովոր ու կոշտ արտաքինին ետեւ կը նշմարէր այն գանձը զոր ինք փնտնելու եկած էր: Կը տեսնէր անոնց հոգիները որոնց համար Քրիստոս իր կեանքը դրած էր: «Սիրտս անձկանօք լեցուն էր բարի լուրը անոնց հաղորդելու կարող ըլլալու» կը գրէր ան: Քանի որ նաւը ղանդաղօրէն կը յառաջանար, Հըտսըն տեսաւ տափարակ ու անծայրածիր դաշտ մը՝ որ դէպի հիւսիս ու դէպի հարաւ կ'երկարէր: Ինչ մեծ ուշադրութեամբ կը դիտէր այն ընդարձակ տարածութիւնը: Իր աղօթքները պատասխանուած էին: Տարիներու երազը իրականացած էր: Վերջապէս Չինաստանի վրայ կը նայէր:

Կ'ըսէ՝ «Ձեմ կրնար նկարագրել այն զգացումները զոր ցամաք ելլելու միջոցին ունեցայ: Կարծես սիրտս կուրծքիս տակ նեղ կ'զգար ու դուրս ցատկել կ'ուզէր որպէսզի ազատօրէն բախէր: Աչքերէս երախտադիտութեան արտասուքներ կը վազէին»: Բայց և այնպէս մինակ ալ կ'զգար, քանի որ որ եւ է ծանօթ չունէր ու չկար մէկը որ իրեն ձեռք երկարելով՝ բարի գալուստ պիտի մաղթէր: Երեք յանձնարարական նամակներ ունէր իր հետ զոր Անգլիոյ մէջէն ծանօթներ իրենց Չինաստանի մէջ գտնուող բարեկամներուն դրած էին: Բնականաբար կ'ակնկալէր որ այս կերպով իրեն պէտք եղած խորհուրդները ընդունէր: Նախ փնտնել այն անձը՝ որուն աջակցութեան վրայ ամենէն շատ յոյս դրած էր և ցաւով իմացաւ թէ անիկա մէկ երկու ամիս առաջ տենդէ մեռած էր: Երկրորդ յանձնարարականը ձեռքն առնելով գնաց գտնելու այն միսիոնարը որուն ան ուղղուած էր: Այս անգամին ալ անոր յոյսը ի դերեւ ելաւ, քանզի իր փնտռած միսիոնարը Ամերիկա մեկնած էր: Ձեռք առաւ իր երրորդ յանձնարարական նամակը՝ որուն վրայ ամենէն քիչ յոյս դրած էր, քանզի անիկա անծանօթէ մը գրուած

էր: Սակայն Աստուած ճիշդ այս միջոցով իրեն օգնել կ'ուզէր:

Անգլիական Հիւպատոսարանէն մեկնելով Լոնտոնի Միսիոնարութեան հաստատութիւնները փնտնելու ելաւ: Ամէն կողմ անսովոր երեւոյթներ կը տեսնէր, ամէն անկիւնէ տարօրինակ ձայներ կը լսէր ու իրեն անծանօթ հոտեր կը հոտոտէր: Նեղ ու բազմամարդ փողոցներուն վրայ կը տեսնէր հարիւրաւոր մարդիկ՝ շրջազգեստ հագած ու մազի երկայն հիւսքով մը որ անոնց կոնական ի վար կը կախուէր: Նշմարեց նաեւ հարիւրաւոր կիներ՝ տաբատ հագած և ասեղնազործ մուճակներ, իրենց կապուած փոքրիկ ոտքերուն:

Վերջապէս պարիսպով շրջապատուած տեղ մը հասաւ և դռնէն ներս մտնելով գտաւ միսիոնարներու մատուռը, հիւանդանոցը և կարգ մը բնակարաններ: Փնտնեց Տօք. Մէտհըրսթ, որուն ուղղուած էր իր երրորդ յանձնարարականը: Ըսուեցաւ թէ անիկա ալ հոն չէր բնակեր: Հըտսըն շփոթած մնաց. չէր դիտեր թէ ինչ քայլ առնելու էր: Ծիշդ այդ վայրկեանին Մր. Էտքինս անունով երիտասարդ միսիոնար մը իրեն օգնութեան հասաւ: Չայն բոլոր հոն բնակող միսիոնարներուն ներկայացուց: Անոնցմէ մէկը՝ Մր. Լաքհարթ, պարապ սենեակ մը ունէր, զոր պատրաստ էր Հըտսընի տրամադրելու: Անոր գալուն բոլորովին անտեղեակ ըլլալով՝ տեղ պատրաստած չէին: Տէր և Տիկին Պըրտըն, որ նոր ամուսնացած էին, զայն ճաշի հրաւիրեցին այն իրիկուն ու առաջին օրուրէն իսկ համակրեցան անոր ու փոխադարձաբար անոր տաք համակրութիւնը վայելեցին: Յաջորդ առաւօտուն գնաց իր ծրարները նաւէն հանեց, պէտք եղած զիրքերը գնեց և ուսուցիչ մը վարձեց Չինարէն սորվելու: Միսիոնարներու շարաթական աղօթածոյովին մէջ Շանկհայի ամբողջ միսիոնարական շրջանակին ներկայացուեցաւ ու բոլորէն տաք ընդունելութիւն գտնելով՝ այլեւս օտար չզգաց:

Շարաթ մը չի լրացած շատ բան տեսաւ: Այն նպաստաւոր լուրերը զոր Անգլիոյ մէջ ստացած էին Չինաստանի մասին՝ մեծ փոփոխութիւն տեսած էին Հըտսընի ճամբորդութեան ընթացքին, որ հինգուկէս ամիս տեւած էր: Շանկհայի միսիոնարները, ինչպէս նաեւ բնիկները պատեւրազմի արհաւիրքները լիովին ճաշակած էին: Տեղական ապստամբներու խումբ մը տիրացած էր քաղաքին, որ պաշարուած էր 40—50,000 կայսերական զինուորներու բանակով մը: Եւրո-

պացիներուն համար ասոնք աւելի վտանգաւոր էին քան ապստամբները:

Հըտսընի առջեւ տարբեր դժուարութիւն մըն ալ ելաւ, որ նմանապէս պատերազմին արդիւնքն էր: Լոնտոնի Միսիոնարական Ընկերութեան բարի միսիոնարները զինքը սիրով հիւրասիրած էին ու ինք յոյժ երախտապարտ կ'զգար անոնց հանդէպ: Ամէն օր ետեւէ եղած էր տուն մը, կամ նոյն իսկ սենեակ մը գտնելու որ կարենար իրենը կոչել, սակայն այնքան տուններ աւերակ դարձած էին ու այնչափ մեծ թիւով բնիկներ Եւրոպացիներու թաղերը ապաստանած էին որ հնար չէր յարմար տեղ մը գտնել: Միեւնոյն զարնան ծագած էր նաեւ իրիմի պատերազմը ու Անգլիան ալ մէջը քաշած: Այս խառնակութիւնները փոխած էին Անգլիական դրամին արժէքը: Պաղատ օրերուն 4 շիլին հաւասար էին 2ինական տօլարի մը, սակայն հիմա 6—7 շիլին կը պահանջէին 2ինական տօլարի մը փոխարէն: Անգլիական դրամին արժէքը հետզհետէ աւելի կ'իյնար: Հըտսըն թէյլըր արդէն այնքան քիչ Անգլիական դրամով 2ինաստան եկած էր որ կարելի չէր առատ դրամ ունենալ: Ունեցածը շուտով կը ծախսուէր, որովհետեւ պատերազմի ու սովի պատճառով պիտիք բարձրացած էին: Լոնտոնէն նամակի ու դրամի կ'ապասէր, սակայն ի զուր: Անոր տագնապը օրըստօրէ կ'աւելնար: Ճշմարիտ է թէ լաւ տան մը մէջ կ'ապրէր, առատ ուտելիք ունէր և բազմաթիւ տարբար ապահով բնակարան մը, սակայն քանի որ ինք Լոնտոնի Միսիոնարական Ընկերութեան չէր պատկաներ ու ո՛չ անոնց հետ ո՛չ ալ անոնց համար գործելու նախապատրաստուած էր, իրեն այնպէս կը թուէր թէ օտար բոյնի մը մէջ կը գտնուէր:

Վրայ հասաւ նաեւ ամառը: Հըտսըն շարունակ քրտինքի մէջ էր: Զերմութեան աստիճանը շաբաթներով 80էն վար չէր իջներ: Տաքութիւնն ու մօեղները սաստիկ կը նեղէին երիտասարդ միսիոնարը: Հըտսըն կ'զգար թէ շատ շնորհքի կը կարօտէր այս ամէնը առանց սրտնեղութեան կրելու և միեւնոյն ժամանակ 2ինարէն լեզուն սորվելու: Կրկին ու կրկին իր Ընկերութեան գրեց թէ դրամի պէտք ունէր: Անոնց յայտնեց թէ վարձու տուն չկար և նոր շէնք մը շինելու միջոցները կը պակսէին:

Անոր նեղութիւնները իրենց զագաթնակէտին հասան, երբ ուրիշներէ իմացաւ թէ իր ընկերութիւնը նոր միսիոնար մը՝ Տօք. Փարքըր ու

անոր ընտանիքը Շանհայ կը զրկէր: Տօք. Փարքըր կին մը և երեք զաւակ ունէր: Ընկերութիւնը բան մը գրած չէր Հըտսընի այս մասին, սակայն անշուշտ կ'ականակէր որ ինք անոնց տեղ պատրաստէր: Բայց ի՞նչպէս կրնար անոնց տեղ գտնել քանի որ իրեն համար սենեակ մը իսկ վարձելու անկարող եղած էր և նոր տուն մը շինել տալու միջոցը չունէր: Իրեն կը հարցնէին՝ «Ո՞ւր պիտի բնակի Տօք. Փարքըր իր ընտանեօք»: «Ընկերութիւնը կը թելադրէ՞» նոր շէնք մը կ'առուցանել»: «Հոգը գնուած է: Ե՛րբ պիտի հասնի Տօք. Փարքըր»: Այս հարցումներէն ոչ մէկին կարելի էր որոշ պատասխան մը տալ: Հըտսընի միակ պատասխանն էր՝ «Այս ամէնը աղօթքի խնդիր ընելով բոլորովին Տէրը ձեռքը յանձնած եմ: Անիկա պիտի հոգայ ու իմ Առաջնորդս պիտի ըլլայ թէ այս և թէ ամէն ուրիշ շփոթիչ պարագաներու տակ»:

(Շարունակելի)

Թարգմ. Ն. Մ.

ՅԻՍՈՒՍԻ ՍԵՐԸ

Ով Տէ՛ր Յիսուս, երբ կը մտածեմ Բու անմահ ու խոր սիրոյդ վրայով, զոր ցուցուցիր ինկած մարդկութեան հանդէպ, հունաւոր մտքովս չեմ կրնար լուծել զայն:

Այո՛, Տէր, Դուն, Անհունդ, ալդ սիրոյն սահմանը տուիր: «Ասկէ աւելի մէկը մեծ սէր չկրնար ունենալ, որ մէկը իր կեանքը բարեկամներու համար դնէ». Յով. 45 : 45:

Տէր Յիսուս, սիրեցիր մեղաւորները, մաքաւորները, հիւանդները և անթերի Աստուծու թեամբդ ամենուն ալ պէտքերը լրացուցիր:

Անտարբեր չգտնուեցար բորոտին սրտամլիկ աղաղակին և բժշկեցիր զայն: Հարեւրապետին հաւատքին հաւնեցար, աղատեցիր անոր ծառան ցաւի անողոք ճիրաններէն. Մատթ. 8 : 6—10:

Քանանացի կնոջ հաւատքին հաճեցար, հրամայեցիր դեւերուն, անոնք հալածուեցան ու աղատեցիր աղջիկը չարչարանաց շղթաներէն. Մատ. 15 : 21—29:

Կենացդ վերջին վայրկեաններուն՝ անդամ մըն ալ Բու մեծ սէրդ ցուցուցիր Բեդ շըջապատող թշնամիներուդ հանդէպ, երբ տառապանքի փայտէն գոչեցիր, «Հայր, թողութիւն տուր

ատոնց, վասնզի չեն գիտեր ինչ կ'ընեն»։ Ղուկ. 23 : 34 :

Սիրելի Յիսուս, երբ օրուան հոգերէն բեռնաւորուած հոգիս գոռացող ալիքներու կը բաղխի ու ես կ'ընկճուիմ, յայնժամ սիրոյ քաղցր ձայնդ ականջիս կուգայ. «Ով բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ, ինծի եկէք, ես ձեզ պիտի հանգչեցնեմ»։ Մատ. 11 : 28—29 :

Երբ հայրենիքի ու սիրելիներու կարօտին կքած՝ կուտակուած գորշ ամպեր մտացս հորիզոնը կը խաւարեն, գորովոտ ձայնդ դարձեալ ականջիս կը փսփսայ, «Ահա ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհիս վերջը»։ Մատ. 28 : 20 : Այս սիրոյ խօսքերէդ ողբերուած Շնորհալի ծառայիդ նման կ'աղաղակեմ՝

«Առաւօտ լուսոյ
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեալ»։

Երբ տարազիր ու անիրաւուած ազգիս խղճաւի վիճակը ուրուականի նման դէմս կը կայնի, և նոյն ժամուն վերաւոր սրտիս հնչնուք մը կ'անցնի, հոս ալ Քու խոստումդ կը յիշեմ, «Իմ Հօրս տունը շատ բնակարաններ կան, ապա թէ ոչ ես ձեզի պիտի ըսէի, հիմա կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ, ու եթէ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն կ'ուզամ և ձեզ քովս կ'առնեմ»։ Յով. 14 : 2—4 :


Ով Փրկիչս, այս առթիւ աղօթքս է որ սիրոյ զարթօնքդ պարգեւես Հայուն և Հայաստանին, որ Սիրոյդ սովամահութեան թմբիւրը կ'ապրի։ Զերմ սիրովդ տաքցուր ազգիս զաւակներուն սառած սրտերը։

«Մէր անհուն Յիսուս,
Սիրով քո ճմլեայ,
Սիրտըն մեր քարեղէն»։



Ամէն ինչ Յիսուս, թող զոհեմ Քեզի,
Տէր իմ Փրկիչըս, որ Մէր ես ինծի,
Կեանք, արեւ ու սէր և երջանիկ յոյս,
Դուն վէմըն ես Տէր, մարմնած հոգւոյս։

ԱՆՆԱ Յ. ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
Ակըսթա (Ճօրճիա)



“ՎԵ”Ի ԶԱՀԱԿԻՐՆԵՐԸ

Աղուոր օր մը, ասկէ քանի մը տարիներ առաջ, մենք բեռնակիր ինքնաշարժով մը, որ ափրիկեան թեթեւ օթոններէն էր, մեկնեցանք մեր միսիոնի կայանէն, որ կը գտնուէր Ափրիկէի Գամբուռնի շրջանը Պալի ըսուած վայրը։ Մեր նպատակն էր շրջակայ տափաստաններու մէջ յարմար տեղ մը գտնել, ուր պիտի կարենայինք նոր կայան մը հաստատել։

Ափրիկէի մէջ օթոններու ճամբաները կ'երկարին, կարելոյն չափ, լեռներու կոնակներու վրայէն, մանաւանդ այն տեղերը, ուր յարմարութիւններ կ'ըլլան ճամբաներու կառուցման համար։

Սկիզբը մենք քանի մը անգամ ելեւէջներ ունեցանք, բայց այնուհետեւ մեր ճամբան գրեթէ հարթ ընթացք մը առաւ շուրջ երկու հազար մէթր բարձրութեան մը վրայ, լեռներու կողերուն զուգահեռ, որոնցմէ հարիւրաւոր, եթէ ոչ հազարաւոր լեռնազագագածներ կ'երեւէին բոլոր ուղղութիւններով։ Տեսարանը կախարդիչ էր իսկապէս։ Եւ մարդ որչափ ալ որ հեռուն նայէր, միայն և միայն լեռներու պիտի հանդիպէր իր հայեացքով։ Էն հեռաւոր լեռներու բաց մանիշակի գոյնը տեսակ մը կարծես կը լուծուէր ապա երկինքին կապուտակութեանը մէջ։

Արեւուն պայծառ լոյսը կը լողցնէր այդ շքեղ լեռնաշխարհի հեռաստանները։ Ու մենք դժուարաւ կ'երեւակայէինք, թէ լեռնաշղթաներու միջեւ հովիտներու երկարութեամբ տարածուած անթիւ-անհամար գիւղերուն և աւաններուն մէջ տակաւին կը տիրէր էն վայրագ հեթանոսութիւնը, որուն հետեւորդները կը սարսափէին ոգիներէ և միեւնոյն ատեն անգութ էին մարդակերութեան աստիճան։

— Հոս է որ մեր կայանը պիտի հաստատուի, ըսինք մենք երկու օր ճամբորդելէ վերջ. «Քիչոնկ» գիւղին մօտերը բլուրի մը վրայ, որ

պատասխարուած է յարմարապէս բոլոր կողմերէ փչող հովերու գէմ, թէպէտեւ գիւղն ինքն ենթակայ էր հովերու:

Մենք բանակցեցանք ցեղապետին հետ, և ըսինք իրեն թէ շուտով նորէն պիտի գանք քովը մնալու նպատակաւ:

— «Բայց չէ՞ որ մենք պէտք է աւելի հեռուներն երթայինք լեռնաշխարհի ներսերը», կը պնդէր մեր յառաջապահ արշաւախմբին միսիոնարներէն մին: «Անդին, կապուտակ հեռաստանին մէջ կը գտնուի աւան մը, որ Վէ կը կոչուի: Ես հոն եղած եմ և յաճախ ալ քարոզած եմ շատ մը ունկնդիրներու, որ զիս ուշադրութեամբ մտիկ կ'ընէին: Անգամ մը որ Քիչոնկի համինք, անկէ ալ ուղիղ Վէ պէտք է անցնինք հարկաւ»:

— «Լաւ», ըսինք մնացեալներս: Միայն թէ շատ ալ աճապարելու չէ: Դանդաղօրէն բայց հաստատուն կերպով գործելու ենք: Երկրորդ քայլն առնելէ առաջ առաջին քայլը նախ պէտք է առնել: Հետեւաբար, նախ և առաջ Քիչոնկի մեր միսիոնի կայանն երթալու ենք:

Սակայն Վէ աւանն ալ ատկէ շատ շուտ գրաւուեցաւ մեր կողմէ: Եւ հոն շատ կարճ ժամանակամիջոցի մը մէջ կազմուեցաւ քրիստոնեաներու պզտիկ համայնք մը, մանաւանդ երիտասարդներէ, որոնք մեծ խանդավառութեամբ ընդունած էին Աստուծոյ խօսքը: Զէ՞ որ Աստուծոյ խօսքը իւրաքանչիւրին համար կը նշանակէ ազատագրում ամէն սարսափէ ու ներքին հոգեկան տաքնապնէրէ: Այն ատեն, սակայն Սուրբ Գիրքը տակաւին թարգմանուած չէր այդ մարդոց լեզուով. ուստի և մենք միայն մեր բերանացի քարոզներով կը գոհացնէինք զանոնք: «Վէ»ի երիտասարդներն ամէն պարագայի մեր միսիոնարներէն սորվեր էին արդէն կարգալ գրել ու թէպէտեւ բաւական ճիշդերով, բայց և այնպէս կրնային տեսրակի մը մէջ գրել Սուրբ Գիրքէն այլ և այլ համարներ և պատմութիւններ: Պէտք է խոստովանիլ սակայն, և ըսել թէ անոնց գրածները շատ հեռու էին Սուրբ Գիրքը ըլլալէ: Այսուամենայնիւ, Սուրբ Գիրքը, առնուազն Նոր Կտակարանը, արդէն սկսած էր թարգմանուիլ անոնց լեզուով:

Միսիոնար Ֆիլիսուրը, որ Պագէլի մէջ կը դործէր, արդէն այն ատեն երբ ես հոն էի, թարգմաներ էր Նոր Կտակարանը զրեթէ լիովին այդ շրջանի սահուն լեզուին, և ասկէ մէկուկէս տարի վերջ, թարգմանութիւնը հրատարակուեցաւ

այլեւս ու տարածուեցաւ բազմաթիւ տպագրուած օրինակներով շրջանի բոլոր վայրերուն մէջ:

Հանդիսաւոր օրեր էին այն օրերը, երբ Աստուծոյ խօսքը, ինչպէս որ վերածնութեան ատեն եղաւ, հնչեց ու սաւառնեցաւ այդ երկրին մէջէն: Թող օրհնեալ ըլլան աս սքանչելի ինքնաշարժները, որ զմեզ կ'առաջնորդէին մրրիկի արագութեամբ լեռներու և հովիտներու մէջէն միշտ դէպի առաջ:

Երբ Ս. Գիրքին առաջին տպագրուած օրինակը Վէ հասաւ, տեղացի քարոզիչը զայն կ'առնէ կը սեղմէ իր կուրծքին և կը բացականչէ, «Մենք այսուհետեւ, ուժեղ պիտի ըլլանք»: Այդ մարդը, տեղացի քարոզիչը, բոլոր իր ցեղակիցներուն պէս երբեմն կը սարսափէր չար ոգիներէ, մանաւանդ զիշերները. ու ցորեկներն անգամ ան ինքզինք ապահով չէր զգար: Բայց հիմա անիկա կոապաշտութեան թանձր խաւարին մէջէն դէպի Աւետարանի պայծառ լոյսն էր ելեր: Եւ սեփական փորձառութեամբ լաւ գիտէր արժէքն այն խօսքին, զոր ինք կ'ըսէր. «Աստուծոյ խօսքը զմեզ պիտի զօրացնէ»:

Եւ անկէ ետք կարելի եղաւ, որ Նոր Կտակարանի տպագրուած օրինակներէն մէյմէկ հատ Միսիոնի դպրոցին աշակերտներուն տրուի: Եւ իւրաքանչիւր քրիստոնեայ ընտանիք ալ իր օրինակը ստացաւ: Եւ որպէսզի Նոր Կտակարանին օրինակներուն բաժանումը տեղացիներուն ալ աւելի տպաւորիչ ու հանդիսաւոր ըլլար և ալ աւելի համապատասխան տեղացիներու զգացողութեան, միսիոնարները զեղեցիկ զազափարն ունեցան բարձունքի մը զազաթը խարոյկ մը վառել: Ու իրիկուն մը, ահագին խարոյկին բոցերը խաւարը ճեղքելով վեր ալացան դէպի մթամած երկինքը: Բոցերուն լոյսը շատ հեռուները տարածուեցան և տեղացիներէն հազարաւորներ, որ խարոյկին փալէն տասնեակ մղոններով հեռու կ'ապրէին, զարմանքով ու հիացումով կը հարցնէին թէ ի՞նչ կը նշանակէր այդ լոյսը: Իսկ խարոյկին շուրջը, լուռ սպասումի մը մէջ հաւաքուեր էր Վէի քրիստոնեայ համայնքը: Հսկայական ու բոցավառ խարոյկ մըն էր ասիկա: Եւ ահա միսիոնի դպրոցին սաները կը յառաջանան Տէրը փառաբանող երգերով, ձեռքերնուն մէջ Նոր Կտակարանները, որոնք ապա կը դրուին լայն սեղանի մը վրայ:

Տեղացի Աւետարանական մը, խօսք առնելով, կը մատնանշէ այդ հանդիսաւոր օրուան կարեւորութիւնը իւրաքանչիւրին համար առանձին և

Թէ բովանդակ համայնքին ու ամբողջ ժողովուրդին համար: Ամենուն համար ալ նոր և գեղեցիկ կեանք մըն էր որ պիտի սկսէր: 25° որ ամենն ալ մինչ այդ ապրեւր էին խաւարին մէջ: Մինչդեռ հիմա ահաւաստիկ իրենց կ'երեւէր Աստուծոյ յայտնութեան պայծառ լոյսը Քրիստոսի միջոցաւ: «Մենք հիմա Պալիի լեզուով գրուած Սուրբ Գիրքը ունենալէ ետք, այլեւս երբեք պիտի չը կրնանք բաժնուիլ Քրիստոսի սէրէն: Մեզ անկէ բաժնել չը պիտի կարենայ ոչ մէկ զօրութիւն, ինչ որ ալ ըլլայ: Մենք պիտի զօրանանք և Աստուծոյ գործն ալ պիտի յառաջ ընթանայ, որովհետեւ աս Գրքին միջոցաւ Տէր Յիսուս Քրիստոս ինք մեր մէջ կը գտնուի ներկայիս»:

Աս հանդէսին էն հետաքրքրական վայրկեանն էր, երբ բոլոր ներկաները ամենը մէկ՝ ոտքի ելլելով, խարոյկին բոցերէն կը վառեն ջահերը, զորս պատրաստեւր էին նախապէս: Ամենն ալ քով-քովի կանգնելով շրջան մը կը կազմեն, որպէսզի մտիկ ընեն միմեանարը, որ Աստուծոյ խօսքը պիտի քարոզէր. «Ես եկայ, որպէսզի երկրիս վրայ կրակ մը վառեմ»:

«Քրիստոսի խօսքն ու ոգին է որ այն մեծ կրակը կը ներկայացնէ, որմէ բոլոր մարդիկ պիտի լուսաւորուին, մաքրուին և կենդանանան: Եւ այդպէսով ալ իւրաքանչիւր քրիստոնեայ եւս ինք պիտի լոյս մը դառնայ: Ու որպէսզի լոյսը յարատեւէ, պէտք է որ զայն վառենք կրկին ու կրկին նոր Կտակարանին միջոցաւ, որու էջերէն կը ճառագայթէ շարունակաբար Քրիստոս, իբրեւ աշխարհի լոյսը»:

«Ուստի, Աստուծոյ խօսքին ջահը վառենք մեր սրտերէն և մեր տուներէն ներս, որպէսզի խաւարը ցրուի և որպէսզի ամենուրեք լոյսը տարածուի, այն լոյսը, որ Աստուծմէ կուգայ Քրիստոսի միջոցաւ»:

Հրճուանքի աղաղակներով, բազմութիւնն ասկէ վերջ գիւղը կը վերադառնայ, և ամէն ոք մէկ ձեռքին նոր Կտակարանը և միւս ձեռքին ջահ մը բռնած:

Այդպէսով հեռու թէ մօտ ապրող հեթանոսներուն համար հասկնալի եղաւ թէ Վլի մէջ նոր բան մը, և շատ կարեւոր բան մը տեղի ունեցաւ:

Միսիոնարները տակաւին երկար նայեցան բլուրն ի վար իջնող ջահակիրներու թափօրին ետեւէն: Գիւղը հասնելով, թափօրի բազմութիւնը սկսաւ ցրուիլ, մասերու բաժնուիլ, այնպէս որ գիւղին բոլոր փողոցները լուսաւորուեցան ջահերէ: Կը թուէր թէ երկինքէն աստղեր իջած

ԽԱՉԵԱԼ ԳԱՌԸ

Անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ:

ԵՍ. ԾԳ.

Ի Գողգոթա որպէս փարոս,
Անմահութեան ակ յորդահոս,
Կանգնած է խաչն անխախտ նշան,
Փրկչին սիրոյն անզուգական:

Հոն կը հոսի արեան հեղեղ
Կողէն խոցեալ Գառին անմեղ,
Ով ծարաւ է, Թող հոն դիմէ,
Եւ կենսաբուղիս ակէն խրմէ:

Տե՛ս, քու փրկիչդ, հոն քեզ համար
Կըրեց վիշտեր խիստ անհամար,
Գրծոխատանջ մահուամբը իւր,
Քաւեց ծանր մեղքերդ բիւր:

Բազկատարած քեզ կ'ըսպասէ,
Ա՛հ, մեղաւոր, աղերսն ըսէ,
«Եկուր ինձի, ո՛վ խեղճ հոգի,
Ես մշտաբուղիս ակն եմ կեանքի»:

Մի՛ դանդաղիր, ո՛ն ըշտապէ,
Փրկչիդ հրաւերն շուտ ընդունէ,
Մի ըսեր «Դեռ ժամանակ կայ»,
Մահուան վըճիռն շուտով կ'ուգայ:

ՍԻՍԱԿ ԳԱԼԱՅՃԵԱՆ

Հարաւ. Ամերիկա

Շլլալով ցանցներէն երկրին վրայ: Սուրբ գիշերուան արտացոլումն ըլլար կարծես, որ լսուեցաւ հրեշտակաց երգը, «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»:

Վէի ջահակիրները թող միշտ ալ լուսոյ դաւակներ ըլլան...:

Թարգմ.

ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԱՄՈՒԷԼ ԵՂԲ. ՊԱԳԳԱԼԵԱՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ



(Շարունակութիւն անցեալ թիւէն)

Է.

Տէր-էլ-Ջօր

Գիշեր է, ու մենք կը մտնենք Տէր-էլ-Ջօր: Քաղաքը բաւական լուսաւորուած է: Կեդրոնական փողոցէն կ'անցնինք պանդոկ: Մեր ճամբուն երկայնքին կողք կողքի շարուած հին ու նոր շէնքերէն զատ ոչինչ կը տեսնեմ քաղաքէն: Առանձին սենեակ մը կը տրուի ինծի: Ուշ է ու ես մահիճ կը մտնեմ: Դուրսը, շատ ցած պատուհանի տակ մէկը կը խմբայ: Բայց ի՞նչպէս արտառոց: Յետոյ, քոյրը ինծի յանձնած է ձէգիւրէ տարուելիք դանձր: Երկրորդ պատճառ մը անհանգիստ ըլլալու: Յոգնած եմ սակայն ու կը քնանամ: Կէս գիշերը անց՝ խշրտոց մը կը լսեմ: Մէկը մինչև մահճակալի մօտ փնտռողութիւն է: Ո՞վ է կը բացականչեմ բարձր: «Մարդ չկայ, մարդ չկայ կը պատասխանէ մէկը թաւ ձայնով, ես եմ, պանդոկապետը»: Բայց ի՞նչ կ'ընես, կը հարցնեմ: «Քնացիր, բան չկայ, այս գիշեր հոս պառկիմ ըսի, բայց պալուսակս կորսնցուցի»: Ապա ճրագը կը վառէ: Իբր թէ կորուստը զտաւ, կը մտնէ մահիճ: Առաւել մտահոգ, մինչև առաւօտ շատ դժուար գիշեր մը կ'անցնեմ: Շատ կանուխ կը պատրաստուինք մեկնելու, ու կը ցաւիմ որ զիս ամենէն աւելի հետաքրքրող նշանաւոր Տէր-էլ-Ջօրը չկրցի լոյս աչքով տեսնել կամ բան մը իմանալ: Մխիթարական՝ սա գիտեմ միայն թէ հոն Ամերիկ. հիւանդանոց մը և հայոց եկեղեցի մը կանգնած են: Եւ ասոնք, այդ տեղին համար պզտիկ նշանակութիւն ունեցող կոթողներ ըլլալու չեն:

Ը.

Կարմիր ճամբայէն

Լուսադէմին կը մեկնինք: Արեւածագի առաջին շողերուն տակ կը դիտեմ զիկզակող Եփրատը իր կանանչ ափերով: Կ'ամփոփուիմ աղօթքի համար: Ապա՝ աչքերս կը սեւեռին հայրենավտար հազարաւոր ազգակիցներու արցունքովը

ռոտողւած անդաստաններուն: Կը տեսնեմ մեր մարտիրոսներուն արիւնովը նուիրականացած աւազուտ տափաստանները: Ահա՛ խանձուած ցախաստանները, ուր ցրիւ և անթաղ ինկան ոսկորոտիքը մեր նահատակներուն: Ահա՛ այն շատ բլրակներն ու խոռոչները, ուր առեւանգուած մեր քոյրերը խոշտանգուեցան ամենաանլուր եղանակներով: Ուր մեր սրտահատորները իրենց մահամերձի հռչակներն հետ՝ արձակեցին նաև իրենց վերջին ճիչն ու հառաչը, իրենց վերջին հեծքն ու աղօթքը: Կը տեսնեմ վերջապէս տօթակէզ և ամուլ աւազուտքները Տէր-էլ-Ջօրին, ուր մեր բազմատանջ մայրերը, պառանքներու և մանուկներու հետ ինկան խելակորոյս: Միրտս պայթելու աստիճան կ'ուռի: Խորունկ փղձկում մը: Կը ջանամ զսպել: Անկարելի է: Կոկորդս կը խեղդուի: Անգուսպ հեծկտուք մը ծայր կ'ուտայ: Ու ես դառնօրէն կուլամ: Քոյրը կը փորձէ մխիթարել զիս: Ինք ալ խորապէս յուզուած է: (Իսկապէս հայու սիրտ ունի այս օտարուհին): Սակայն, այսպիսի պահերուն է գերազանցապէս, որ Աստուծոյ մխիթարութիւնը կը ծիածանուի թաց աչքերու մէջ, — ինչպէս արեւը՝ դեռ թուի և անձրեւամաղ հորիզոնին վրայ: Մխիթարիչ մօր մը պէս կը հասնի: Ձեռքս բնագործին կ'երկարի Սուրբ Գրքիս: Աչքերս կը համեմատեմ. 35: 1—3 համարներուն վրայ. «Անպատը ու չոր երկիրը պիտի ուրախանայ... ու շուշանի պէս պիտի ծաղկի...»: Ապա ցոյց կ'ուտամ քրոջը եւ. 66: 14ը. «Եւ պիտի տեսնէք ու սիրտերնիդ պիտի ուրախանայ, ու ձեր ոսկորները կանանչ խոտի պէս պիտի ծաղկին»: (Հայերէն թարգմ.) Քոյրը կ'զմայլի ալգպիսի համարի մը նոր հանդիպողի պէս: Ի վերջոյ Բ. Կոր. Ա. 1—4 ին կը յադիք:

Մինչեւ հոս, հազուադէպօրէն մշակուած հողերու կը հանդիպինք: Անապատի տափակ միօրինակութիւնը կը գեղեցկանար միայն, մերթընդ մերթ տեղաբնակ վաչկատուններու սեւ վրաններովը, կամ անոնց կողքին արածուող այծերու և ուղտերու երամակներովը:

Կառքը պահիկ մը կանգ կ'առնէ: Կ'իջնեմ այդ նուիրական հողէն ափ մը վերցնելու, համբուրելու և պահելու փափաքով: Ապա խայռները կը հաւաքենք լուսանկարուելու ու կը շարունա-

(Շարունակութիւնը տես՝ Կողքին 4րդ էջը)

Le Gérant : H. N. GHAZAROSSIAN

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St - Savournin Marseille

ՏԷՐ, ԱՄԷՆ ԲԱՆՍ ՊՈՒՆ ԵՄ

Գերմաներէնէ՝ 3. Ն. 2.

Handwritten musical score for "The Rose Tree" in G major, 4/4 time. The score is written on two systems of five-line staves. The first system is marked *mf* and *cres.* and the second system is marked *P*. The melody is in the treble clef and the bass line is in the bass clef. The lyrics are written in Georgian script below the staves.

Աստղին իմ, լոկ յառիմ Բեզ
վէմս, ուր կայնիմ ես
Ղեկավարս հըզօր Տէր
Մականս անվեհեր.
Հացս, որով ապրիմ լոկ,
Ազբիւրս անապակ,
Նշանաբանս ձգտիմ Բեզ,
Ավէն բանս Դոնս ես:

2 Բաց ի Քէն ուրկէ գար
Ոյժ և յոյս մխիթար,
Բաց ի Քէն ով կարէր
Յառնել մեղացս բեռ,
Բաց ի Քէն ցնդին պիտ
Եւ ըլլան անպետ
Յոյսս, հաւատքս և իմ սէրս,
Ամէն բանս Դուն ես:

Յ Արդ, քալեմ անվեհեր,
Ճամբաս դէպի վեր.
Մինչ հնչեն դանդեր ջինջ
ես հասնիմ երկինք.
Հոն ձայնեմ երզն հնչիւն
Սուրբ գահին առջին —
Ձեմ արժանի ես Գեղ
Ամէն բանս Դուն ես:



կենք ճամբանիս: Դեռ Տէր-էլ-Չօրէն չեւած, կը նշմարենք Քորարը իր դալարազեղ ուրտներով: Այս հինաւորաց գետը կը պատգամէ ինծի եզ. 37ի մեծ տեսիլքը. — Տէրը զիս հոգիով հանեց ու զիս դաշտին մէջ դրաւ, և անկառ ոսկորներով լեցուն էր... և ահա անոնք խիստ չորացած էին...: Եւ մարգարէութիւն ըրի ինչպէս ինծի հրամայեց ու շունչը անոնց մէջ մտաւ, ու կենդանացան, և իրենց ոտքերուն վրայ կայնեցան, ու խիստ մեծ զօրք եղան: Ի՛նչ տեսիլք և ի՛նչ ՅՈՅՍ: Քորարի զիմաց՝ փառք կուտամ «մեռելները յարուցանող» Աստուծոյն: Այս ջարդավայրերուն մէջ ալ կարող է Ան իրականացնել յաւէտ ճշմարիտ սա խօսքը. «Արիւն մարտիրոսաց, սերմ եկեղեցւոյ»:

Թ.

Հասիչէ

3 Նոյեմբերին կը մտնենք Հասիչէ: Քորար և և Ճախճախ գետերուն միացման անկիւնակէտին վրայ շինուած է քաղաքը: Հոն իջնելուս պէս, հայ ուղեկիցս՝ սրունքները հասնող ճամբաներուն ցեխը ակնարկելով, — ճիշդ Փարիզի փողոցներուն կը նմանի, չէ՞ — կը կատակէ հետս: — Որպէս հակապատկեր՝ կատարելապէս — կը պատասխանեմ ծիծաղելով:

Ուղղակի, մի քանի տարի առաջ, Տէր և Տիկ. Breeth վարձած Միս. տունը կ'իջնենք: Առաջին մի քանի օրերը, քրոջ հետ տնայարդարութեամբ կ'ըրազիմ: Ապա՝ յաճախակի անձրեւներուն և սաստիկ ցեխին պատճառաւ հագուազէպօրէն կ'ելլեմ քաղաքը տեսնելու: Գամշիկէն աւելի պզտիկ և նուազ բանուկ, Հասիչէն՝ շնորհիւ հոն հաստատուող ֆրանսական պետական կազմին, Ճէզիրէի կարեւորագոյն քաղաքը կը նկատուի: Տարածուն և բերրի դաշտերուն հազիւ մէկ հինգերորդը մշակուած է: Հակառակ ջուրերու առատութեան, քաղաքը տխրօրէն չերկ է և կանանչազուրկ: Այս տես Ճախճախի ափերուն A. C. O. միսին. ընդարձակ ագարակ մը հաստատուելու ծրագիրը ունէր, զոր լքեց յակամայս: Հաւանական է սակայն որ ապագային Ե. Տ. Կ. միսին. կայան մը կառուցուի անոր փոխարէն, որպէս կեդրոնատեղի Ճէզիրէի գործին:

Հասիչէ կաթնայ մըն է ալլազան ցեղերու, լեզուներու և աղանդներու: Իր 40.000 բնակչութեան մեծամասնութիւնը Ասորի օրթոտոքսներ, կաթոլիկներ և հայ պապականներ են: Անոնցմէ վերջը կուգան Քաղզիացիներ և հայեր, որոնք նոյնպէս կազմակերպուած են և ունին զպրոց ու եկեղեցի: Ասոնց կողքին աննշան փոքրամասնութիւն մը կը կազմեն Նեստորեաններն ու հայ կամ Ասորի բողոքականները: Հատ, հատ իսլամ

տուններ ալ կը գտնուին: Վերջինները բնականաբար պէս զիւղերը հաստատուած են որպէս երկրագործ և հովիւ:

Քոյր Հեովիկ Պիւլի շնորհիւ հոս ճանչցած անձերէն յիշուելու արժանի են, հանրածանօթ Հաճօ Աղան, Թուրքիոյ փախստական քիւրտ աշիրաթներու պարագլուխը և հայերու լաւ բարեկամ մը: Տօքթ. Ինկիլիզեան, տեղւոյս միակ և շատ ազնիւ բժիշկը: Ճէզիրէի հեծեալ ոստիկաններու (Gendarme) ընդհ. հրամանատար Հրանդ Պէյ: Ճարտար և զինահատելի այս հայ պաշտօնեան, պատոււում L'égion d'honneur շքանշանով, այնքան խոնարհ է որքան պատկանելի և մարդամօտ: Հասիչէն մեկնելէս առաջ, քոյր, վերջին երկուքը ընթրիքի կը հրաւրէ, միասին վալլելու համար եղնիկի մը փառաւոր գիտութեամբ, զոր Տօքթ. Ինկիլիզեան ինք որսացած և նուէր դրկած էր: Սեղանէ վերջ՝ ընտանեկան պահ մը կ'անցնենք կարեւոր խօսակցութեամբ, զոր ի վերջոյ կը յանդի մտերմիկ և քաջալերական հոգեւոր խօսակցութեան մը: Մեկնելու պահուն հրամանատարը փափաք կը յայտնէ և կը խոստանայ ուրիշ տեսակցութիւններ ընել Տըրիքի մէջ, զոր ըրաւ ալ:

Ճէզիրէի հողին վրայ առաջին ժողովս Հասիչէի մէջ ըրի 6 Նոյեմբերին քիւրտերէն թարգմանութեամբ: Միսին. տան միջնասրահը մինչև դուռը լեցունած էր ժողովուրդով, ուր զինուորականներ ալ կը տեսնուէին: Տէրոջը խօսքը սերմանուեցաւ: Կը մնայ որ ինք «հունձքին Տէրը» իր խօսքը օրհնէ և պտղաբերէ համաձայն Ես 55: 10—11ին:

(Զարուհակելի)

ՍԱՄՈՒԷԼ Պ.



ԱԶԴ

Անցեալ օր Թօրամիշ (Ճէզիրէ) գացի և հոն սիրելի հայ զինուոր մը գտայ բաւական ուսեալ և ազնիւ: Տեսնուեցանք: Խնդրեց ինձմէ որ իրեն հայերէն կարդալիքներ ղրկեմ: Հիմա երկու հայ զինուոր կայ հոն, որոնք կարգալու փափաքող են: Անոնց թերթիկ կը ղրկեմ: Արդեօք ունէ մէկը պիտի չյօժարէ՞ր Թօրամիշի մէջ մեկուսացած և ամէն հայ և հոգեւոր հաղորդակցութեանէ զրկուած այս մեր սիրելի ազգակից զինուորներուն թանքեր մը նուիրել: Ահա՛, անմահ հոգիներու և զօրազդ հայ զինուորներու ծառայելու գեղեցիկ պատահութիւն մը Տէրոջմէ փափաքողներուն:

ՍԱՄՈՒԷԼ Պ.